

№ 7 Հրատ. Ա. Դ. Հնչ. Ամեր. Գործ. Յանձ.ի

ԳՐԻԳՈՐ ԵՂԻԿԵԱՆ

ՀԱՐԱՋԱՏՆԵՐ



Կոմեղիս 4 Գործողութեամբ



ՏՊՐԱՆ «ԵՐԻՑԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի

ՓՐՈՎԵՏԵՆՍ

1913



891.99

Վ-26

19 NOV 2011

891.99

4-26.

№ 7 Հրատ. Ա. Դ. Հնչ. Ամեր. Գործ. Յանձ.ի

ԳՐԻԳՈՐ ԵՂԻԿԵԱՆ

ՀԱՐԱՋԱՏՆԵՐ

Կոմեղիս 4 Գործողութեամբ



ՏՊԱՐԱՆ «ԵՐԻՑԱՍԱԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի

ՓՐՈՎԻՑԵԱՄ

1913

08 AUG 2013

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ



ԹՕՄԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ ՆԻՋԶՈՎ Հասառու
ԱԼԵՔՍ. ՄԱՏՎԵՅԵԽՆՈ. ՎՈԼԿՈՎԱ. ՆՐա ԿԲՆԱԿԻցը
ԵԱՂԻԿ ԻՎԱՆՈՎՆՈ. ԳՈԶՈՎԵԱՆ ՆԻՖԱՂՈՎԻ ՔՊՈՐԸ¹
ԱՐՑԵՄԻՑ ՄԱՆՈՒԿԻՈՎԻՉ Մարդկանց որդիները
ՄԻՇՈ. }
ԿԱՐԱՊԵՏ ԲՈՒՐԱԳԻԼԵԱՆ Դերձակ
ՇՈՒՇԱՆ ՆՐա ԿԻՆԸ
ՍՄԲՈՅ Նրանց որդիքը
ՀԵՂԻՆԵ }
ԱԲՐԱՀԱՄ Եկամագ աղջիկ
ԵՒԳԵՆԻԱ Մի աղջիկ
Մառայ, աղախին և ուրիշներ

(Դէպքը տեղի է ունենում կովկասի արդիւ-
նաբերական կեղբոններից մէկում՝ մեր օրերին):



55417-66

ՀԱՐԱՁԱՏՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Բուրագէլեամների բնակարանում մի սենեակ։ Աշ կողմը դուռ, որի մօտ կայ սեղան։ Պատից կախւած է հայելի։ Քիչ դէպի աշ դարձաւալ սեղան, որի վրայ կան սպիտակեղէններ։ Սեղանի մօտ կատարան, վրան արդուկ և կատալկա։ Դէպի ձախ տախտակեայ մի հին մահճակալ, որի վրայ իրար վրայ դարսած մի դօշակ և երկու վերմակ։ Խորցում դուռ, որի մօտ պատի տակ կայ տաշտ սպիտակեղէնով լիքը, նրա մօտ սակառ։ Մի քանի հին աթոռներ, երկու պատկեր ձախ պատի վրայ։ Վարագոյրը բացւելիս Շուշան տաշտի մօտ կանգնած շօր է լւանում։ Մտնում է աշ դռնից Հեղինէ մետաքսեայ շքեղ տարագով և հարուստ զըլիսրկով, զրան մօտ պատից կախւած հայելու մէջ նայում է իրան, ուղղում շըջազգեստի յետեւը, ապա զիմում է դէպի մօր կողմը, բաց է անում ձեռի պայուսակը և պօրտմօնէն հանկով նրանում ինչ որ փնտռում է)։

ՇՈՒՇԱՆ. — Աղջի՛, դարձեալ ո՞ւր ես գնում՝
այսպէս անժամանակ։

ՀԵՂԻՆԵ. — Այդ քո գործը չէ։

ՇՈՒՇԱՆ. — Աւելի լաւ չի լինի արդեօք, որ

փոխանակ թրսելու մնաս տանը, ինձ օգնես, բանս
շուտ վերջացնեմ և կիրակմուտի իրիկունով մայր
ու աղջիկ մի քանի ժամ իրար հետ խօսենք:

ՀԵՂԻՆԵ.— Ուրիշ անգամ կարող ես խօսել
ինձ հետ, որքան ուզում ես: Իսկ այժմ ես պէտք
է որ գնամ: Առ քեզ քան ըուրիի, վճարի՛ր տան
վարձը... մնաս բարո՞վ... ինձ ո՞չ թէյի, ո՞չ էլ
ընթրիցի մի՛ սպասիլ... եթէ քիչ է քանը, հինգ
ըուրիի էլ տամ:

ՇՈՒՇԱՆ.— Աղչի՛, քո փողը ո՞ւրեղից է, որ
այսպէս առատօրէն ես ինձ նւիրում:

ՀԵՂԻՆԵ.— Այդ էլ քո գործը չէ: (Դնում է
զրամը սեղանի վրայ ու դուրս է գալիս):

ՇՈՒՇԱՆ.— Հեղինէ... Հեղինէ... (Պառզա)
դարձեալ գնաց առանց ինձ լսելու վերջին անգամ...
Աստւած իմ, այս ի՞նչ պատիժ է... (շարթւնակում
է լւանալ, երբեմն թեւերով սրբելով աչցերը: Պառզա):
Ո՞վ է տւել նրան այս դրամը... ինչո՞ւ են տւել...
ախ, չլինի թէ... (Թղաւում է անմիտ բացազանչու-
թեամբ, վազում է դեպի սեղանը, վերցնում է դրամը եւ
շպրտում գետին): Աղջի՛կս, Հեղինէս... Հնդինէս...
(բարձր ձայնով հեկեկալով ընկնում է մի աթոռի վրայ):
(Սկսում է բեմը ճթնել. պատկեր.)

ՄՄԲԱԾ.— (Մանում է հասարակ սեւ չթեայ բը-
լուզով, սեւ անդրավարտիքով մէջքին կապած
մի բարակ գօտի, զիւին կասկէտ, ունի երկար
միրուց: Դէմքը տանջանք է արտայայտում:
Զեռքին կայ մի փոքրիկ պայտսակ: Զորս
կողմն է նայում: Պառզա. պատկեր.)

ՄՄԲԱԾ.— ինձ ասացին, որ իմ հարազատ-
ները այստեղ են ապրում: (Պայուսակը դնում է պատի
տակ ու առաջ է գալիս) Ա... ո՞վ է այս կինը...
(աւելի է մօտենում) տիկին...

ՇՈՒՇԱՆ (սթափւելով) Ո՞վ ես դու. ինչ ես
ուզում..., (ոտի է կանգնում և նայում է նրան) Դու
ո՞վ ես...

ՄՄԲԱԾ (երկար նրա երեսը նայելով) Մայրի՛կ...

ՇՈՒՇԱՆ (նոյնպէս երկար նրան է նայում) Սըմ-
բաշտ... զաւակս...

ՄՄԲԱԾ.— Այս՝, ես եմ, քո անդրանիկ որ-
դին, որ ՚7 տարւայ բացակայութիւնից յետոյ ե-
կել է փնտուելու իր հարազատներին...

ՇՈՒՇԱՆ.— Ողորմած Աստուծ: (Համբոյր. գըգ-
ւանը): Դու ճիշտ որ իմ որդին ես, իմ Սմբատը,
որին մենք վաղուց մեռած էինք կարծում...

ՄՄԲԱԾ.— Ես էլ ինձ մեռած էի կարծում,
մայրի՛կ, բայց և այնպէս Աստւած ուզեց, որ ես
ապրիմ ճեզ և ճեր նմանների համար:

ՇՈՒՇԱՆ.— Իսկ ո՞ւր էիր դու. ինչո՞ւ մինչև
այժմ մեզ ոչինչ չէիր գրում, ինչո՞ւ այսպէս յան-
կարծորէն եկար մեզ գտնելու...

ՄՄԲԱԾ.— Բանտումն էի ամբողջ երեք տարի,
ապա աքսորւած էի... միայն չորս ամիս է ինչ
ազատւել եմ աքսորավայրից... աւելի ճիշտը փա-
խել եմ...

ՇՈՒՇԱՆ.— Ինչե՞ր ես ասում, որդի՛, ինչո՞ւ
քեզ բանտարկեցին, աքսորեցին... չէ՞ որ դու այն-

քան բարի էիր ու խելացի...

ԱՄԲԱԾ.—Հէնց դրա համար էլ ինձ պատժեցին... սակայն թողնենք անցեալը... ես հազիւձեզ մօտ մնամ մի քանի օր... շուտով պէտք է որ հեռանամ այստեղից... անցնե՞նք ներկային, պատմիր ինձ ձեր մասին... Դու արտասում ե՞ս, մա՛յր:

ՇՈՒՇԱՆ.— Է՛ս...

ԱՄԲԱԾ.— (իր շուրջը նայելով) Մայրի՛կ, չես հասկանում. (պառզա) Մայրի՛կ... ո՞ւմ սպիտակեղէններն են սրանք... չե՞ս պատասխանում... ասա՛մա՛յր, ուրիշի համար էիր լւանում, հա՞... արտասում ե՞ս շարունակ...

ՇՈՒՇԱՆ.— Զաւա՛կս...

ԱՄԲԱԾ.— Մէր են հայրս, եղբայրս, քոյրս:

ՇՈՒՇԱՆ.— Զգիտեմ:

ԱՄԲԱԾ.— Ինչպէս թէ չգիտես:

ՇՈՒՇԱՆ.— Նրանք զւարճանում են այս ու այն տեղ... (լալիս է):

ԱՄԲԱԾ.— Ինչպէս թէ զւարճանում են:

ՇՈՒՇԱՆ.— Այս քաղաքը ամէն բան առաւ իմ ձեռից, որդի՛, նախ քեզ, ապա ամուսնուս, ապա եղբօրդ... իսկ այսօր էլ աղջկանս... (արտասում է հեկեկալով):

ԱՄԲԱԾ.— Չեմ հասկանում...

ՇՈՒՇԱՆ.— (շարունակում է արտասւել առանց պատասխանելու եւ զլուխը միշտ գետին խօնարհած):

ԱՄԲԱԾ.— Ասա՛, մա՛յր, չլինի՞ հայրս ու եղբայրս էլ են բանտարկւած որևէ յանցանքի հա-

մար, կամ գուցէ քոյրս արել է որևէ բան մեր անւան արատ բերող...

ՇՈՒՇԱՆ.— Ո՛չ, ո՛չ, զաւա՛կս, ո՛չ...

ԱՄԲԱԾ.— Ուրեմն ինչ է պատահել:

ՇՈՒՇԱՆ.— Երանի մեռնէի մի ժամ առաջ և քեզ չտեսնէի... (Վառում է լամպը):

ԱՄԲԱԾ (Նայում է շուրջը, վերցնում է վեր ընկած մի քանի իրեր և դարսում սեղանի վրայ): Սպագտնում է մի դրամ, վերցնում է, մի քանի անգամ դարձնում է մատերի մէջ, նայում է մօրը անհանգիստ շարժումներին, ապա կանգնում է նրա առաջ և ցոյց է տալիս նրան դրամը):

ՇՈՒՇԱՆ (Նոյնպէս հաւաքում է իրեր ու դարսում սեղանի կած տախտակի վրայ): Զի նայում որդիին Շըփոթւած է):

ԱՄԲԱԾ (Խիստ) Լւացարարը այնքան հարուստ չի լինի, որ իր դրամը շաղ տայ:

ՇՈՒՇԱՆ.— Ես շատ հարուստ եմ... ո՛չ միշտ այդ ոսկին, այլ և այդպիսի շատ ոսկիներ եմ շաղ տւել (լափշտակում է նրա ձեռից դրամը եւ շպրտում զետին): Տի՛ս, յատակի վրայ էլի կայ... (Կոխուսում է և լնկնում է աթոռի վրայ եւ լացումի):

ԱՄԲԱԾ.— Մ՞վ տւեց քեզ այդ փողերը:

ՇՈՒՇԱՆ.— Հեղինէն:

ԱՄԲԱԾ.— Իսկ նա ումբց է ստացել:

ՇՈՒՇԱՆ.— Զգիտեմ... աշխատել է... պարտք է վերցրել... (երեսն է ծածկում):

ԱՄԲԱԾ.— Մա՛յր, ասա՛ ինձ բացարձակ ու

Երկ ճշմարտութիւնը... այս ի՞նչ մութ պատմութիւն է... ասա՛... (թեւից քաշում է, ուզում է երեսը բանալ):

ՇՈՒԾԱՆ— Ի՞նչ ես ուզում, որ ասեմ քեզ:
ԱՄԲԱԾ— Ո՞ւր է Հեղինէն... ո՞ւր են հայրս...
ԱՐԵՎԱԿԱՄԸ... Ի՞նչ են անում նրանք... (հրամ է մօրը)
 Եռում ես, հա՞... երեխ մի բան կայ թագնւած քու լուսութեան տակ... բայց ես կը գտնեմ այդ զաղուարքը, որքան խոր էլ թաղէք նրան... (նայում է) Մայր... միթէ այս ձեռվ պիտի ընդունէիր դուքու անդրանիկ որդուն... ինչո՞ւ այդ գաղտնապահութիւնը...

ԿՈՐԱԳԻԾ (Դրսից երգում է) Դերեալար միւրէրէպ օլսա, մէշէլէր քալէմ...

ՇՈՒԾԱՆ.— Հանգիստ, Սմբա՛տ, այս րոպէիս կգամ:

(Մինչ ուզում է դուրս գալ, ճտնում է Կարապետ բոլորվին հարբած, շորերը փոշոտ, ցիսոտ, մազերը զգզւած, գլխարկը ծուռ զըրած զլիխին Շուշան խօսում է նրա հետ, իսկ նա երգում է առանց նրա վրայ ուշադրութիւն դարձնելու):

ԱՄԲԱԾ (ինքնիրան) Հայրս և ի՞նչ վիճակում, տէր Ասուա՛ծ:

ԿՈՐԱԳԻԾ — Դերեալար միւրէրէպ օլսա, մէշէլէր քալէմ, դէրդիմի... աղչի՛, ի՞նչ ես խօսում, ինքնաեռը պատրաստի՛ր... դերեալար միւրէրէպ օլսա... ա՛, Շուշա՞ն... դու չգիտես ախր է՛, շիր-

վանցու գինետանը լաւ քէֆ արինք, խմեցինք հա՛... ես էի, քարտաշ Խաչին, ներկարար Մարկոսը, դերձակ Զուշուլը, միտս չի գալիս ուրիշ ո՞վ կար, դէ՛, ինքնաեռը շուտ պատրաստի՛ր, թէյ եմ ուզում, թէյ, շատ ծարաւ եմ... փող էլ չունեմ զինի խմեմ ու:

ՇՈՒԾԱՆ.— Այ մարդ, կոյր ե՞ս, չե՞ս տեսնում, ո՞վ է եկել մեզ մօտ:

ԿՈՐԱԳԻԾ (տեսնելով Սծրատին) Ո՛յ... (կոճակները կոճկում է, զիսարկը վերցնում է խոր զլուխ տալիս) Զեր խոնարհ ծառան, կարապետ թուրագէլեան, դերձակ, կարում եմ Պարիզի վերջին նորածեռութիւններով վերարկու, քէտէնգօտ, քօնժուր, քրակ, յանձնարարութիւն կարող էք անել աներկիւզ: (Շուշան սկսում է սենեակը կարգի բերել):

ԱՄԲԱԾ (խուլ ձայնով) Ո՛չ մի յանձնարարութիւն չունեմ անելու:

ԿՈՐԱԳԻԾ.— Թոյլ տւէ՛ք նկատելու սակայն, որ ձեր հագուստը քաղաքում հագնել անվայիլ է, արի՛, ասե՞նք, որ դուք Ելենա կարպովնային էք ուզում տեսնել, նստէ՛ք, պարո՞ն, ներողութիւն... ձեր ազգանո՞ւնը:

ԱՄԲԱԾ (Ճնշւած) Ամբատ թուրագէլեա՞ն:

ԿՈՐԱԳԻԾ.— Իմ որդին:

ԱՄԲԱԾ.— Այո՛, քո որդին:

ԿՈՐԱԳԻԾ.— Դու ինձ խարում ես, պարո՞ն, իմ որդին վաղուց է մեռել, նա ոհամալսարանից դուրս գալուց յետոյ աներեոյթ եղաւ, նա մե-

ռաւ... մեռաւ... (լացուծ է) եթէ նա ողջ լինէր,
մենք հիմա շատ հարուստ կը լինէինք:

ԱՄԲՈՅՏ.— Ես քո որդին եմ, հայր, քեզ չեմ
խարում: Թէև քեզ հարուստ չեմ դարձրել, բայց
յոյս ունեմ, որ ձեզ երջանիկ պիտի կարողանաւ
դարձնել սրանից յետոյ:

ԿԱՐԱՊԵՏ.— Աստած ձայնդ լսի, որդի,
քարի ես եկել, արի՝ համբուրեմ ճակատդ, մէկ
էլ... այժմ նստի՛ր, որդի, աղջի՛, ի՞նչ ես անում
այդտեղ, սենեակը յարդարելու ժամանակ չէ, շտա-
պի՛ր, ինքնաեռը պատրաստի՛ր, (Նուշան գնում է)
պէտք է մինչև հիմա թէյը պատրաստ լինէր, ան-
պիտան կինը փնտացել է:

ԱՄԲՈՅՏ.— Նա մինչև հիմա լւացք էր անում,
հայր:

ԿԱՐԱՊԵՏ.— Այո՛, այո՛, ո՞ւմ լւացքն էր,
է, շատ հարուստ մարդ է, բայց թողնենք այդ,
որդի՛, և դիմենք քեզ, ինչպէս ես, փող շատ
ունե՞ս:

ԱՄԲՈՅՏ.— Առողջ եմ, փող էլ քիչ կայ:

ԿԱՐԱՊԵՏ.— Աշխատի՛ր փող շատ ունենալ,
որդի՛, որ շատ փող ունեցար, քո բոլոր վատ գոր-
ծերն ու յատկութիւնները կը ծածկւին, փող չու-
նեցար, որքան լաւ մարդ էլ լինիս, էլի մարդ չես:

ԱՄԲՈՅՏ.— Հայր...

ԿԱՐԱՊԵՏ.— Երբ ես ունէի մի լաւ արհես-
տանոց և մի տասնեակ բանւորներ, այն ժամա-
նակ շատ պատւաւոր մարդ էի, բոլորը ինձ գլուխ

էին տալիս, իսկ երբ մի շարք անյաջողութիւններ
պատճառ դարձան իմ կործանման, ես էլ դարձայ
ամենաանպատիւ մարդը այս քաղաքում: Որդի՛,
սպանի՛ր, գողացի՛ր; շնացիր, միայն թէ փող հա-
ւացի՛ր, շատ հաւաքի՛ր... էգէր ջէննէթդէ մէնզի-
լիմ օլսա... (երգուծ է):

ԱՄԲՈՅՏ.— Հայր, փոխանակ խօսելու եր-
գում ես:

ԿԱՐԱՊԵՏ.— Խօսելիս լացելու եմ, իսկ եր-
գելիս թեթևանում: դու էլ երգի՛ր, որդի... էգէր
ջէննէթդէ մէնզիլիմ օլսա, օրայա գիտմէնամ, սէվ-
լիյիմ սէնսին, էյ, էյ, էյ... փող հւնե՞ս, առո՞ր,
մի շիշ արադ խմեմ:

ԱՄԲՈՅՏ.— Լա՛ւ, կտա՛մ, միայն այն ասա՛,
հայր, ո՞վ է Ելենա կարպովնան, որին հանդիպե-
տու համար իր բարեկամները այստեղ են գալիս:

ԿԱՐԱՊԵՏ.— Ծիծաղ է, ծիծաղ, հա՛, հա՛, հա՛,
նա քո քոյրն է, Հեղինէն:

ԱՄԲՈՅՏ.— Իսկ նա ե՞րբ Ելենա կարպովնա
դարձաւ:

ԿԱՐԱՊԵՏ.— Այն օրից, երբ նա սկսեց բարձր
դասի հետ յարաբերութիւններ ունենալ:

ԱՄԲՈՅՏ.— Ի՞նչ կապ կարող է ունենալ քոյրս
բարձր դասի հետ:

ԿԱՐԱՊԵՏ.— Նիազովի քրոջ տղան ուզում է
ամուսնանալ նրա հետ: Ինչո՞ւ ես ծիծաղում:

ԱՄԲՈՅՏ.— Զէ՞ որ նիազովի, նման ինամի
պիտի ունենանց:

ԿԱՐԱՊԵՏ. — Այո՛, այո՛, Ելենա կարպով-նան նրանց շատ դիւր է գալիս։ Բացի այդ թօ-ման իվանովիչ Նիվազովը իմ լաւ բարեկամս է, յաճախ ենք իրար հետ լինում։ Գիտե՞ս, այժմ միջնորդութիւն էլ եմ անում, սպասաւոր, սպասու-հի, դաստիարակչուհի ես եմ վարձում հարուստների համար, որի փոխարէն ինձ լաւ վարձատրում են։ Եատ անգամ Թօման իվանովիչը ինձ ուրիշ յանձ-նարարութիւններ էլ է տալիս կատարելու, ջա՞ն, ջա՞ն, էգէր ջէննէթդէ մէնզիլիմ օլսա...»

ՍՄԲԱՏ. — Ի՞նչ տեսակի յանձնարարութիւններ։

ԿԱՐԱՊԵՏ. — Չեմ ասիլ, Թօման իվանովիչը ասում է, որ պէտք է գաղտնապահ լինել։ Եատ լաւ մարդ է նա, միասին յաճախ կօնեակ, լիքօր, ողի ենք խոսում, Մազիկ քաջին էլ լաւ կնիկ է, իսկ Արտեմիյ Մանուկովիչը, հոգի՝ է, հոգի։

ՍՄԲԱՏ. — Հեղինէն էլ նրանց մօտ յաճախ է լինում։

ԿԱՐԱՊԵՏ. — Նրա շորերը միշտ նրանք են առնում։ Արտեմիյ Մանուկովիչը նրան էլ, ինձ էլ փող է տալիս, բայց նրան շատ է տալիս։

ՍՄԲԱՏ. — Եւ նա ստանում է։

ԿԱՐԱՊԵՏ. — Այլապէս չի կարող հագւել այն-պէս, ինչպէս վայել է բարձր դասի հետ կապեր ունեցող մի աղջկայ։

ՍՄԲԱՏ. — Ուշաս, Լոհիր, (գնում է դէպի դուռը և ճօրը ձեռքից բռնան ներս էլքիրում նրան) Մա՛յր, ասա՛, միթէ ճշմարիտ է ասում հայրիկը, ասա՛,

որ նա հարբած է, նա խարում է ինձ, լռում ես, մայր, ուրեմն ճի՞շտ է։

ԿԱՐԱՊԵՏ. — Էգէր ջէննէթդէ մէնզիլիմ օլսա, որդի՛, երկու արասի փող տո՛ւր։

ՍՄԲԱՏ. — Ա՛ռ։

ԿԱՐԱՊԵՏ (գնում է երգելով):

ՍՄԲԱՏ. — Մա՛յր, դու դարձեալ լռում ես։

ՇՈՒԾԱՆ. — Ի՞նչ գիտեմ որ ի՞նչ ասեմ։

ՍՄԲԱՏ. — Իսկ աղջիկդ մի սրիկայի ձեռին խաղալիք է դարձել։ Բայց այդպէս լինել չի կա-րող, ես կը խօսեմ քրոջս հետ, նա խելօք աղջիկ է, ամէն բան կասի ինձ։

ՀԵՂԻՆԵ՛ (դրսից) Աս րեվօր! (Ճանում է) Մայ-րիկ, վարդագոյն ներքնազգեստս արդուկել ե՞ս, վաղը սուրճի եմ հրաւիրւած։ Ա՛, այստեղ օտար մարդ կայ։ Երկի Արքահամի ընկերներից մէկը... Փը՛ը... ի՞նչ է անում այստեղ։

ՍՄԲԱՏ. — Հեղինէ՛, ինձ չե՞ս ճանաչում։

ՀԵՂԻՆԵ՛ (ճօտենալով նայում է նրան) Սմբա՛տ, այդ դու ե՞ս, աւելի շուտ գուշակեցի, քան ճանա-չեցի, սակայն ինչո՞ւ այդպէս վատ ես հազնւած, տեսնողը քեզ մի քուեակ կը կարծի։

ՍՄԲԱՏ. — Գուցէ հագուստս քոսեակի է, բայց վստահ եղի՛ր, որ նրանով ծածկւած է մի բարձր հոգի և ազնիւ սիրտ պարունակող մարմին։

ՀԵՂԻՆԵ՛ (Ուրախ եմ (ուզում է գնալ դէպի սենեակը))։

ԱՄԲՈՅՏ (ճօտենում է նրան) Ո՞ւր ես գնում, Հեղինէ, միթէ այդպէս սառն ես ընդունում քո եղբօրք:

ՀԵՂԻՆԻ. — Իմ եղբօրք:

ԱՄԲՈՅՏ. — Այո՛, հարազատ եղբօրդ: (Նրա ձեռաները իրենների ճէջ պահած ուշաղրութեամբ նայում է նրա երեսին, յետոյ հայեցքով չափում է նրա ամբողջ հասակը) Մա՛յր, մեզ առանձին թո՛ղ: (Շուշան անխօս հեռանում է) Ո՞ւր էիր այս ժամանակ և այս հագուստով:

ՀԵՂԻՆԻ. — Նիստովանց տանը, Ալեքսանդրա Մատվէյինայի մօտ:

ԱՄԲՈՅՏ. — Իսկ ո՞վ է նա:

ՀԵՂԻՆԻ. — Մի դաստիարակչուհի, որից ֆըրանսերէնի դասեր եմ առնում: Ամէն օր այս ժամանակ գնում եմ նրա մօտ: Այսօր ուրիշ հիւրեր էլ ունէին, դրա համար էլ ուշացայ: Ասենք, Գօղալեանն էլ մեզ հրաւիրեց կառքով մի շրջան անել ծովափում:

ԱՄԲՈՅՏ. — Միթէ կը վայելէ սնանկացած գերձակ կարապետի աղջկան կառք նստել Նիստովների կամ Գօղալովների հետ:

ՀԵՂԻՆԻ. — Ալեքսանդրա Մատվէյինան իմ բարեկամուհին է, իսկ Գօղալովի աղջիկը իմ դասընկերուհին է եղել:

ԱՄԲՈՅՏ. — Իսկ մայրդ, նա օտար է քեզ համար, նա քո աղախինն է: Զէ, որ քո բացակայութեան ժամանակ նա չարաչար աշխատում

է այստեղ բոլորովին միայնակ ու անօգնական:

ՀԵՂԻՆԻ. — Ի՞նչ կարող եմ անել, ինչո՞վ կարող եմ նրան օգնել:

ԱՄԲՈՅՏ. — Քո աշխատանքով:

ՀԵՂԻՆԻ. — Աշխատանք ցոյց տո՛ւր: (Ծիծաղ) ինձ յարմար աշխատանք չկայ: Պետական դըպոցներում վարժուհու տեղ չեն տալ ինձ, որովհետեւ ցէնզ չունեմ, իսկ ցէնզ ստանալը այնքան դժւար ու արդիւնքը այնքան չնշին է, որ մարդ ակամայ մտածում է, թէ չարժէ ցէնզ ձեռք բերելու համար աշխատիլ:


ԱՄԲՈՅՏ. — Մի ուսումնաբանում կամ մի քանի մասնաւոր դասեր տալով դու կարող կը լինէիր օգնել ծնողներիդ, օրինակ լինել փոքր եղբօրդ: Կարող էիր և դաստիարակչուհի լինել, իսկ եթէ այդ էլ չյաջողւէր, քո տեղ ես մի քանի աշակերտուհիներ կը հաւաքէի և կար ու ձեմ դասեր կտայի:

ՀԵՂԻՆԻ. — Քիչ է մնում, ասէք, «քո տեղը ես լւացարար կը դառնայի»:

ԱՄԲՈՅՏ. — Ի՞նչ ամօթ քան է լւացարար դառնալ մի աղջկայ համար, որի մայրը լւացարար է արդէն:

ՀԵՂԻՆԻ. — Մայրս ինձ նման չի դաստիարակւել: Ի՞նչ որ բնական է անել նրան, նոյնը անել դառն է ինձ համար:

ԱՄԲՈՅՏ. — Ազնիւ աշխատանքը երբէք դառն



չէ, որքան էլ նա ծանր լինի։ Ընդհակառակը ազ-
նիւ աշխատանքի մէջ միայն կայ կեանքի վսե-
մութիւնը և մարդկային երջանկութիւնը։

ՀԵՂԻՆՔ.— Կանանց աշխատանքը թունաւոր
է, ասում է Ալեքսանդրա Մատվէյենան։

ՍՄԲԱԾ.— Նա ստում է անամօթարար։

ՀԵՂԻՆՔ.— Ո՛չ, նա ճշմարիտ է ասում։ Նա
ասում է նոյնպէս, որ կինը ծնւած է զւարճանա-
լու համար։

ՍՄԲԱԾ.— Կինը, ինչպէս մի մարդ, ծնւած
է աշխատելու համար։ Դուք կոչւած էք լինել մայր,
տանտիկին, դաստիարակչուհի, դուք պարտաւոր
էք լինել և քաղաքացի։

ՀԵՂԻՆՔ.— Ես քաղաքացի լինելու մասին չեմ
էլ մտածում, իսկ իմ մայրական, տանտիկնո՞յ ու
դաստիարակչի պաշտօնները կը կատարեն նրանք,
որոնց կը վճարեմ։

ՍՄԲԱԾ.— Ինչո՞վ։

ՀԵՂԻՆՔ.— Այնպիսի մարդու կը յանձնեմ
բաղդա, որ կարողանայ վճարել։

ՍՄԲԱԾ.— Կա՞յ այդպիսի մէկը։

ՀԵՂԻՆՔ.— Ես ու Գօգառվու սիրում ենք
միմեանց։ Մենք ամէն օր տեսնում ենք իրար և
նա այժմեանից արդէն վճարում է իմ հագուստի
և զւարճութիւնների համար։

ՍՄԲԱԾ (իփսո) Այսօրից սկսած այլևս չես գը-
նալ նրա մօտ և կը ջանաս մոռանալ նրան առմիշտ։

ՀԵՂԻՆՔ.— Ուշ է արդէն։ (Լացում է)

ՍՄԲԱԾ.— Ինչպէս։ (Պառզա) Հեղինէ՛, ասա՛,
ասա՛... (բռնում է ձեռքը) Արդէն...»

ՀԵՂԻՆՔ.— Թողէ՛ք ինձ, ինչ էք ուզում ին-
ձանից, ուզում էք, որ չգնամ նրա մօտ, մոռա-
նամ նրան, մոռանամ ինձ, ուզում էք, որ ձեզ ա-
սեմ ամէ՛ն բան, ո՛չ, ո՛չ, ո՛չ, ոչինչ չեմ ասի։

ՍՄԲԱԾ.— Քեզ կստիպեմ ինձ ասել բոլորը։

ՀԵՂԻՆՔ.— Ես նրան եմ սիրում, նա էլ ինձ
է սիրում, դուք ո՞վ էք, ինչո՞ւ է՞ք ինձ խանգա-
րում, ինձ հանգիստ թո՛ղ։

ՍՄԲԱԾ.— Ասա՛, ասա՛ ինձ ճշմարժութիւնը
և քեզ հանգիստ կը թողնեմ։

ՀԵՂԻՆՔ.— Չեմ կարող ասել, չեմ կարող,
հասկանում ե՞ս, չեմ կարող ասել... մի հետա-
քրքրից, որ հասկանաս, կը սարսափես։

ՍՄԲԱԾ.— Հեղինէ... (յարձակւել է ուզում նրա
վրայ)։

ՀԵՂԻՆՔ.— Ահ... (դէմքը ծածկած փախչում է իր
սենեակը։ Սճրատ կանգնում է քարացած)։

ՎԱՐԱԳՈՅՐ



ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Բեմը ներկայացնում է ճոխ կահաւորւած սրահ Նիշաղովանց տանը: Այլ կողմը մուտքի դուռը, ձախ կողմը երկու դռներ: Խորը պատշգամբ, որի աջ կողմից ճի դուռ տանում է Արտեմի սենեակը: Վարագոյրը բացւելիս նիշաղովը ճի թիկնաթոռի մէջ ընկողմանած լրազիր է կարողում: Մտնում է մուտքի դռնով Կարապետ բէտէնզօտով և օսլայած շապիկով):

ԿԱՐԱՊԵՏ.— Բարի լոյս, աղա Առատամ, լաւ բեր եմ բերել:

ԻՕՄԱՆ.— Երեկի փողի շատ կարիք ունես:

ԿԱՐԱՊԵՏ.— Կայ արդեօք աշխարհի երեսին մի մարդ, որ փողի կարիք չունենայ:

ԻՕՄԱՆ.— Եթէ Վարպետովի մուրհակը բերել ես, կատանաս ինձանից հարիւր բուրլի:

ԿԱՐԱՊԵՏ.— Այդ մուրհակը իմ գրպանումն է:

ԻՕՄԱՆ.— Մինչև որ չտեսնեմ, չեմ հաւատալ:

ԿԱՐԱՊԵՏ.— Տին:

ԻՕՄԱՆ.— (Հետաքրքրւան) Տո՛ւր, տեսնե՞մ:

ԿԱՐԱՊԵՏ.— Նախ դու տուր ինձ հարիւր մանէթը:

ԻՕՄԱՆ.— (Զանգահարդում է) Մտնում է սպասարք: Մի շիշ կօնեակ և երկու բաժակ սուրճ բե՛ր:

ԿԱՐԱՊԵՏ.— Քիչ էլ ուտելու բան, աղա Առատամ:

ԻՕՄԱՆ.— Կայց, այ աղայց, թիչ էլ ուտելու բան, բե՛ր: (Սպասարք գնաւմ է): Դի՛, տեսնե՞մ

մուրհակը, այ մարդ, քո փողը իս չեմ ուտելու: **ԿԱՐԱՊԵՏ.**— Չեմ տալ, չեմ տալ, չեմ տալ: Դու չես իմանում, թէ ինչպիսի դժւարութեամբ եմ հանել այդ մուրհակը Վարպետովի թղթերի միջից: Ինձ որ բռնեն, մինչև Սիրիր մէկ կուղարկեն: (Սպասարքը բերում է կօնեակ, սուրճ և ուտելիք):

ԻՕՄԱՆ.— Գնա՛, քեզ պէտք չունենք այլես: (Սպասարքը գնում է):

ԿԱՐԱՊԵՏ.— (Յ բաժակ կօնեակ է խմում իրար յետելից) Զեր կենացը, (ուտում է ինչ լաւ ձուկ է, երշիկն էլ պակաս չէ: (խմում է)) Զեր կենացը, աղա՝ Առատամ:

ԻՕՄԱՆ. Այ մա՛րդ, մուրհակը տո՛ւր, տեսնե՞մ, ճիշդ որ քրոջս աղու Վարպետովին տւած հինգ հազար բուրլիանոց մուրհակն է:

ԿԱՐԱՊԵՏ.— Ա՛ռ... (Տալիս է: Խմում է): Զեր կենացը, աղա՝ Առատամ, լաւ կօնեակ է...

ԻՕՄԱՆ.— Մասնաւորապէս քեզ համար եմ բերել տւել ֆրանսիայից, խմի՛ր, որքան կարող ես: Ա՛ռ քեզ դրամ էլ:

ԿԱՐԱՊԵՏ.— Աղա՝ Առատամ, մի ոսկի ե՞ս տալիս, ախր ե՞շէ մեղք եմ, մուրհակը ինձ յետ տո՛ւր, կամ հարիւր բուրլի տուր: Հանձնան բանի բաժակ էլ: Փողը գրպանն է՛ջ խուճ, Ունի մկնարաց ցը, աղա Առատամ: (Միծաղում է) Աղա՝ Առատամ մեր մարդու գործերը յաջողւում են, լինար յետի

Հից են յաջողւում:

ԹՕՄԱՆ. — Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել:

ԿԱՐԱՊԵՏ. — Այն վրացի աղջիկը, որի մօտ ռւղարկել էիր ինձ, ընդունում է քո առաջարկութիւնները: Այսօր պիտի գայ քո զրասենեակում քեզ տեսնելու:

ԹՕՄԱՆ. — Այ, ապրի՞ս, շատ աչքաբաց մարդ ես, կարապետ, ա՛ո քեզ մի ոսկի էլ...

ԿԱՐԱՊԵՏ. — Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, (խճում է) քո կենացը...

ԹՕՄԱՆ. — Դէ՛, կարող ես գնալ: Այն աղջկայ հետ կզաս զրասենեակ երեք ժամ յետոյ: (Կարապետ խոր զուխ տալով դուրս է գալիս) Վարպետով՝վ, վարպետով՝վ, դու շատ էիր յոխորտում, հիմա ցոյց կտամ, թէ ո՞վ է Բօման իվանովիչ Նիազովը,

(Քրսից լսում են խօսակցութեան ձայններ: Մտնում են Ալեքսանտրա Մատվեյևնա և Մազղիկ):

ԾԱՂԻԿ. — Այս կնիկը գլխիս է նստում, Առստա՞մ, այստեղ նա ինչացո՞ւ է, եթէ տանտիկին է, ասա՞ , երեխաներս հաւաքեմ, երթամ այստեղից:

ԱԼԵՔՍԱՆՁՐԱ. — Վճարեցէ՞ք, պարո՞ն, իմ ոռնիկը և այսօր և եթէ կը հեռանամ այստեղից:

ԹՕՄԱՆ. — Ասացէ՞ք, նախ...

ԱԼԵՔՍԱՆՁՐԱ. — Ոչ, պարո՞ն, վճարեցէ՞ք և ես իսկոյն կը հեռանամ, դուք ինձ այս տունը մտցըիք որպէս դաստիարակչուհի, յետոյ խարե-

լով ձեր սիրուհին դարձրիք, իսկ հիմա ձեր քոյրը վարում է ինձ հետ, որպէս աղախնու հետ, կամ ես կամ նա...

ԾԱՂԻԿ. — Ճիշտ է, ճիշտ է, կամ ես, կամ նա: **ԹՕՄԱՆ.** — Ա՛խր, ասէ՞ք, տեսնե՞մ, ի՞նչ է պատահել:

ԾԱՂԻԿ. — Խոհարարին պատւիրում եմ կոլուակ պատրաստել, այս կինը յարձակում է վրաս, ինձ կոչում է ասիացի, հայուկ, վայրենի... վերցնում, միսը գետին շպրտում...

ԱԼԵՔՍԱՆՁՐԱ. — Ես filet de boeuf a la dauchesse եմ ուզում: Ես չեմ կարող ասիացու նման ուտել թցոտած, լղճուկ, ծեծւած այլ և այլ այլանդակ անուններ ունեցող կերակուրներ:

ԹՕՄԱՆ. — Սաշա՛, լա՛ւ, գնա՛, ասա՛ թող քեզ համար ֆիլէ պատրաստի: (Ալեքսանտրա գնում է): Ա՛, քոյր, ինչո՞ւ ես նրա հետ զլուխ դնում, գնա ուզածդ պատրաստել տո՞ւր, իսկ նա թո՞ղ ֆիլէ ճարի ու ուտի: (Միծաղում է):

ԾԱՂԻԿ. — Միծաղելով բան չի լինիլ: Նրան պէտք է հեռացնել այս տնից, թէ չէ ես կը հեռանամ:

ՄՄԲԱՅՏ. — (Մտնում է. բարեկում է) Ուզում եմ Արտեմիյ Մանուկովիչին տեսնել:

ԹՕՄԱՆ. — Ապասեցէ՞ք, իսկոյն կը դրկեմ: (Մաղիկ և Բօման նվաճովիչ դուրս են գնում)

ՄՄԲԱՅՏ. — (Ոտի վրայ, ճիշտ ճիկնայն տեղը կանդած սպասում է: Մտնում է Արտեմիյ Մանուկովիչ և լա

derniere mode հագւած): Արտեմիյ Մանուկովիչի
հետ պատիւ ունեմ խօսելու:

ԱՐՏԵՄ.— Այո՛, պարո՞ն, իսկ դուք ո՞վ էք:
ՍՄԲԱԾ.— Բուրագէկեան...

ԱՐՏԵՄ.— (ցնցւելով) Օրիորդ Ելինայի եղ-
բայրը...

ՍՄԲԱԾ.— Այո՛:

ԱՐՏԵՄ.— Իսկ ինչի՞ն եմ պարտական ձեր
այցելութիւնը այստեղ:

ՍՄԲԱԾ.— Երէկ միայն հասայ իմ հարազատ-
ների մօտ և երէկ միայն իմացայ, որ դուք մեծ
պատիւ էք անում մեզ ընդունելով ձեր տունը հօրս
և քրոջս: Նրանք ձեզ մօտ վայելում են կատար-
եալ ու ջերմ հիւրասիրութիւն, արդեօք նրա հա-
մար, որ ձեզ պատիւ է բերում նրանց բարեկա-
մութիւնը, թէ կայ ուրիշ պատճառ:

ԱՐՏԵՄ.— Մօրեղբայրս ձեզ աւելի լաւ կը
պատասխանի քան ես:

ՍՄԲԱԾ.— Ձեր պատասխանն էլ ինձ կը բա-
ռականացնի:

ԱՐՏԵՄ.— Ձեր հայրը մեզ համար աղախին-
ներ, սպասաւորներ ևայլն է ճարում, բացի այդ
մօրեղբայրս երբեմն տալիս է նրան կարեոր կամ
չնչին յանձնարարութիւններ կատարելու, որոնց
համար և՛ վճարում է նրան:

ՍՄԲԱԾ.— Երեկ քոյրս էլ ձեզ համար է կա-
տարում նման յանձնարարութիւններ և դրամստա-

նում ձեզանից դրանց համար կամ գուցէ... (դողում
է: Կատաղի թափով ձեռքը խփում է սեղանին):

ԱՐՏԵՄ.— (նրանից հեռանում է մի քայլ) Հան-
դարտւեցէր...

ՍՄԲԱԾ.— Ճիշտ էք ասում. պէտք է հան-
դարտ լինել: Ես ապրել եմ միշտ այնպիսի շրջա-
նում, ուր ամէն բան մաքուր է, նոյն իսկ գաղա-
փարական, մինչդեռ ձեր շրջանում տեսնում եմ
այնպիսի բաներ, որոնք անսովոր են ինձ...

ԱՐՏԵՄ.— Մեր շրջանը աւելի զարգացած է...

ՍՄԲԱԾ.— Ո՛չ, պարո՞ն, զարգացում չի կա-
րելի կոչել այն, որին ենթակայ է ձեր միջավայրը:
Ձեզ մօտ մարդիկ այլասեռուած են, անբարոյակա-
նացած, այլապէս ինչպէս բացատրել այն, որ մի
միլիոնատէր մեղսակցում է մի հարբեցող գերձակի
հետ կամ մի աղքատ աղջիկ ճգտում է լինել միշտ
հարուստների շրջանում թէկուզ իր պատիկ գնով...

ԱՐՏԵՄ.— Ձեր նպատակը բացատրեցէք, պա-
րո՞ն:

ՍՄԲԱԾ.— Միթէ չհասկացաք:

ԱՐՏԵՄ.— Ո՛չ, բայց... ո՛չ, ո՛չ, ոչինչ ըլ
հասկացայ...

ՍՄԲԱԾ.— Իմ քոյրը աղքատ ծնողների աղ-
ջիկ է. նա պարտաւոր է մալ տանը, աշխատել,
օգնել իր ծնողներին, մինչդեռ նա միշտ լինում է
այստեղ, ձեզ մօտ: Նա երէկ հաւատացնում էր
նոյն իսկ, որ դուք և նա իրար սիրում էք:

ԱՐՏԵՄ. — Նա՞ ճիշտ, որ այդպէս ասաց ձեզ?
ՍՄԲԱԾ. — Այո՛:
ԱՐՏԵՄ. — Նա՞... նա՞... սակայն նա չէր
յանդգնիլ...

ՍՄԲԱԾ. — Ես ստիպեցի:
ԱՐՏԵՄ. — (բռնազրօսիկ ծիծաղով) Զեր քոյլը
չափից աւելի խորամանկ է:

ՍՄԲԱԾ. — Զեմ հասկանում:
ԱՐՏԵՄ. — Մոռացած իր հասարակական դը-
րութիւնը նա փեսացուներ է որոնում մեր շրջա-
նում, դրա համար էլ շատերին հաւատացրել է, որ
նրանց սիրում է: Ինձ էլ նա հաւատացրեց, բայց
ես չհաւատացի:

ՍՄԲԱԾ. — Իսկ ինչո՞ւ չասացիք նրան, որ ի-
րաւոնց չունի նա մարդկային ամենատարրական
զգացումների հետ խաղալ, ինչո՞ւ նրանից երես չը-
դարձրից, ինչո՞ւ նրա ծախսելը դուք վճարեցիք:

ԱՐՏԵՄ. — Նա իմ քրոջ ընկերուհին էր. նը-
րանց իրար սիրում են... որպէս քրոջս սիրող
մէկը ես չէի կարող նրան հեռացնել մեր շրջանից
առանց քրոջս վիրաւորելու... իսկ մեր շրջանում
անհրաժեշտ էր լաւ հագւել, որի համար էլ ոտիպ-
ւած էի նրան դրամ տալ...

ՍՄԲԱԾ. — Որպէս մի ազնիւ մարդ դուք պիտի
զրկէիք ձեր քրոջը իմ քրոջ ներկայութիւնից և
այս վերջինին պիտի ցոյց տայիք իր ծնողների
շրջանը...

ԱՐՏԵՄ. — Այդ իմ ուժերից բարձր էր:
ՍՄԲԱԾ. — Որովհետև նա գեղեցիկ էր, այն-
պէս չէ:

ԱՐՏԵՄ. — Դարձեալ յուզւեցիք:
ՍՄԲԱԾ. — Ինչ որ չէք արել մինչև այսօր,
այժմ արէք, խզեցէք ձեր յարարերութիւնները նրա
հետ, նրան ցոյց տւէք աշխատելու ճանապարհը,
նրան զրկեցէք ձեր նիւթական օժանդակութիւնից...
դրա համար ես ձեզ երախտապարտ կը լինեմ,
իսկ նա, ճիշտ է այսօր կը վշտանայ, բայց ա-
պագային կը յարգի ձեզ ձեր ազնութեան համար...

ԱՐՏԵՄ. — Այդ աւելի շուտ դուք կարող էք
անել որպէս մի մեծ եղբայր և ես ձեզ երախտա-
պարտ կը լինեմ, եթէ դուք նրան արգիլէք ինձ
հետեւել... ես ճանձրացել եմ նրա դիմումներից...
իսկ մինչ այդ յայտնում եմ ձեզ, որ չեմ սիրել
քո քրոջը և նրան ոչինչ էլ չեմ ասել իմ սիրոյ
մասին: Երթաց բարով:

ՍՄԲԱԾ. — Ես ոչինչ չհասկացայ, աւելի
ճիշտը դուք չբաւականացրիք ինձ:

ԱՐՏԵՄ. — Ես մեղաւոր չեմ, եթէ դուք ան-
ընդունակ էք որևէ բան հասկնալու:

ՍՄԲԱԾ. — Ինչ որ հասկացայ շատ վատ է
խօսում ձեր մասին:

ԱՐՏԵՄ. — Զեզ հաշիւ տալու կարիք չեմ զգում:
Բարի էք եկել... եալլահ...

ՍՄԲԱԾ. — Այդ է ձեր վերջին խօսքը...

ԱՐՏԵՄ. — Այո՛ :

ՍՄԲԱԾ. — Զգուշացէ՞ք... եթէ, յիրաւի, որևէ
բան պատահել է ձեր մէջ...

ԱՐՏԵՄ. — Չեզ հաշիւ տալ չեմ կամենում,
ասացի և կրկնում եմ: Երթաք բարո՞վ:

ՍՄԲԱԾ. — Մնաք բարով: Մենք երկի շուտով
կը տեսնենք: (Գնում է):

ԱՐՏԵՄ. — (Տինակ) Ա՛ռ բեզ բան, անպիտան
աղջիկը եղբայր էլ է ունեցել, այն էլ ինչպիսին...
յանդուգն, գիտնական, ինչ որ է, անհրաժեշտ է
շուտ վերջ տալ այդ աղջկայ և իմ յարաքերու-
թեանց կամ... կամ... եթէ պէտք եղաւ պէտք է
հօր ձեռքով որդուն սպանել տալ... (Ճտածում է:
Մանում է Թօթան Իվանովիչ)

ԻՕՄԱՆ. — Օ՛, բարեկամ, այստեղ ե՞ս և այդ-
պէս մոռայլ:

ԱՐՏԵՄ. — Մօրեղբայր...

ԻՕՄԱՆ. — Ինչո՞ւ ես գոյնդ այդպէս ձգել:

ԱՐՏԵՄ. — Մի մեծ գումարի կաբից եմ ըզ-
գում, այլապէս կեանքս վտանգի մէջ է:

ԻՕՄԱՆ. — Երկի կրկին տարւել ես եքէկ գիշեր:

ԱՐՏԵՄ. — Ո՛չ, ընդհակառակը երէկ տա-
րել եմ:

ԻՕՄԱՆ. — Ի՞նչ ես անում մեծ գումարը:

ԱՐՏԵՄ. — Մօրեղբայր... ըըը...

ԻՕՄԱՆ. — Ասա՛, ասա՛, տեսնե՛մ, ի՞նչ նոր
քաջագործութիւն ես արել:

ԱՐՏԵՄ. — 2 տարիէ ի վեր Հեղինէին խոս-
տացել եմ իր հետ ամուսնանալ: Ակզրներում ան-
կեղծօրէն սիրում էի նրան, բայց այժմ նրանից
վախճանում եմ և կամենում եմ շուտ հեռանալ նը-
րանից:

ԻՕՄԱՆ. — Հեռացի՛ր, ո՞վ է ձեռիցդ բռնել:

ԱՐՏԵՄ. — Չեմ կարող, մանաւանդ այժմ, երբ
մեծ եղբայրը այստեղ է և կարող է ինձ ստիպել
ամուսնանալ իր քրոջ հետ:

ԻՕՄԱՆ. — Յախուռն ես եղել, հա՛, պարո՞ն,
առանց հետեանքի մասին մտածելու: Դէ, ուրեմն
գնա՛ և ամուսնացի՛ր նրա հետ, ես էլ հարբեցող
դերձակ կարապետի և մայրդ լւացարար Շուշանի
հետ իննամի կը լինենք: Լա՛ւ քաջագործութիւն եռ
արել, պարո՞ն...

ԱՐՏԵՄ. — Մօրեղբայր... նրա հետ ամուս-
նանալ չեմ կարող, չեմ ուզում:

ԻՕՄԱՆ. — Լա՛ւ, ի՞նչ ես մտադիր անել:

ԱՐՏԵՄ. — Պէտք է մի գումար տալ այդ
աղջկան և լուցնել, քանի եղբայրը շատ առաջ
չի գնացել:

ԻՕՄԱՆ. — Լա՛ւ, որքան ես գնահատում նրան:

ԱՐՏԵՄ. — 10,000:

ԻՕՄԱՆ. — Լա՛ւ է: Երկի դու մտադիր ես ինձ
ու մօրդ մնանկացնելու: Այս մի շարթում քո
15,000 ր. պարտքդ եմ վճարել, այսօր էլ 10,000
ես ուզում, ես այդքան դրամ չունեմ քեզ տալու:

ԱՐՏԵՄ.— Ուզում ե՞ս, որ պսակւեմ նրա հետ:

ՐՈՄԱՆ.— Իսկ ինչո՞վ ես պահելու:

ԱՐՏԵՄ.— Ինչ անեմ ուրեմն:

ՐՈՄԱՆ.— Ես հազար բուրլի կտամ, մասածի համար դիմի՞ր մօրդ:

ԱՐՏԵՄ.— Չեմ ուզում, որ մայրս իմանայ, նա ինձ կըստիպի ամուսնանալ այդ անպիտան աղջկայ հետ: Մօրեղբա՛յր, խնդրում եմ, աղաչում եմ, սա վերջին անգամն է, որ քեզանից այսպիսի մի գումար եմ ուզում, դու չես ճանաչում նրա եղրօը, նա յանդուզն է, իր քըոջ պատիւը պաշտպանելու համար նա կարող է նոյն իոկ ոճիր գործել... կեանցս վտանգի տակ է, մօրեղբա՛յր... ներիր ինձ... այս անգամ էլ օգնի՞ր...

ՐՈՄԱՆ.— Լա՛ւ, լա՛ւ, կը մտածեմ այդ մասին:

ԱՐՏԵՄ.— Չեմ կարող սպասել, պէտք է այսօր վերջացնել այդ աղջկայ հետ:

ՐՈՄԱՆ.— Անպիտա՞ն, անպիտա՞ն, մինչև ե՞րբ այսօն շուայլ պիտի լինիս դու, ինչ որ է, գնում եմ գրասենեակ, սպասի՞ր ինձ...

ԱՐՏԵՄ.— Շնորհակալ եմ, մօրեղբա՛յր, դու ինձ փրկեցիր խայտառակութիւնից ու մահից, (Համբուրում է ձեռքը):

ՐՈՄԱՆ (գնում է):

ԱՐՏԵՄ.— Դրամը գտայ: Մնում է նրան տալու միջոցի մասին մտածել: (Նստում է գրասե-

դանի առաջ ու մտածում է: Հեղինէ մտնում է ու դանդաղ մօտենալով գրկում է նրա գլուխը): Հեղինէ'...

ՀԵՂԻՆԷ.— Քեզ հետ կամենում եմ խօսել:

ԱՐՏԵՄ.— Մօրեղբօրս խօսեցի քու դաշնամուրի մասին, նա շուտով կը վճարի...

ՀԵՂԻՆԷ.— Դրա մասին յետոյ:

ԱՐՏԵՄ.— Հա՞... ահա քեզ դրամ, քո յանձնարարած վերարկուին կը վճարես...

ՀԵՂԻՆԷ.— (Փողը ձեռին պահած) Եղբայրս այստեղ է:

ԱՐՏԵՄ.— Ճեսայ նրան: Գիտե՞ս, աչքիս լո՛յս, դու պարզախօս ես եղել նրա հետ: Նա ակնարկեց մեր մէջ տեղի ունեցող ինչ որ մեղքի մասին:

ՀԵՂԻՆԷ.— Արտե՛մ:

ԱՐՏԵՄ.— Բնդունի՞ր, աչքիս լո՛յս, որ առժամանակ էլ պարտաւոր ենք գաղտնի պահել մեր միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները: Գնա՛տուն, հոգի՞ս, և...

ՀԵՂԻՆԷ.— Դու ինձանից խուսափում ես:

ԱՐՏԵՄ.— Երեկոյեան քեզ կսպասեմ Գրանտօտէլում:

ՀԵՂԻՆԷ.— Արտե՛մ, ինձ մինակ ես թողնում այժմ, երբ ես այնցան պէտք ունեմ քո խորհուրդներին: Եղբայրս ոչինչ չի ուզում հասկանալ: Նա ինձ ստիպում է հեռանալ ձեր անից: Ես այդ անել չեմ կարող... դու գիտես, թէ ինչո՞ւ, չեմ կարող...

ԱՐՏԵՄ.— Չեմ հասկանում, թէ ինչո՞ւ եռ

կամենում այս վերջերս մեր վրայ հրաւիրել ու-
թշների ուշադրութիւնը: Ես արգիլում եմ քեզ խօ-
սել ուրիշներին մեր յարաբերութեանց մասին...
ցտեսութիւն, մենք շուտով կը տեսնենք: (Գնում է):

ՀԵՂԻՆՔ.— Կա՞ց ա՛խ, կստած իմ, այս ի՞նչ
է պատահում ինձ... (ընկնում է Հեղինելով դաշնա-
մուրի վրայ Մանում է Ալեքսանտրա Մատվեյնան բո-
լորովին ուրիշ տարադով և մօտենում է նրան):

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Ելինա կարպովնա'...

ՀԵՂԻՆՔ.— Տիկի'ն...

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Այս ի՞նչ դրութեան մէջ
ես, լաց ես եղել, ի՞նչ է պատահել...

ՀԵՂԻՆՔ.— Ես դժբաղդ եմ, դժբաղդ...

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Քեզ նման մի գեղեցիկ ու
բարեկիրթ աղջիկ չի կարող դժբաղդ լինել: Շա-
տերը պատրաստ են քո ոտերի առաջ խոնարհւել,
քեզ երկրպագել և սէր խոստանալ: Խվերջոյ վը-
ճարել, ինչպէս հարկն է:

ՀԵՂԻՆՔ.— Ես սիրում եմ միայն մէկին...
իսկ նա... նա...

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Զեզ մերժում է...

ՀԵՂԻՆՔ.— Այո՛:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Թո՞ղ մերժի:

ՀԵՂԻՆՔ.— Այն ժամանակ չեմ իմանում ի՞նչ
կը պատահի ինձ հետ:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Դուք իսկոյն կը մոռանաց
նըան:

ՀԵՂԻՆՔ.— Այդքան հեշտ է մոռանալ:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Ուելի հեշտ քան մի հնա-
ցած շապիկ աղբանոց նետելը: Ես ապրում եմ
Նիազովի հետ առանց նրան սիրելու և միշտ
զգալով այս ամենամօթալի խայտառակութիւնը,
որին ենթարկում է նա ինձ ամէն օր: Բայց, ի՞նչ
արած, պէտք է տանել, որովհետեւ ինձ հագուստ,
զւարձութիւններ ու զրամ են հարկաւոր: (Նստում
է դաշնամուրի ճօտ ու նւազում է):

ՀԵՂԻՆՔ.— Դուք ձեր կեանքում երբեկցէ
չէք սիրել:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Ձեր հասակում, այո՛: (Նւ-
ագ): Արտեմը իարում է և կամենում է քեզ լըել:

ՀԵՂԻՆՔ.— Կատակ էք անում, տիկի'ն...

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Ամենապարզ ճշմարտու-
թիւնն եմ սսում: (Նւագ): Արանց արեան մէջ խըդ-
ճահարութեան ամենաաննշան մի մասնիկ իսկ չկայ: (Նւագ):

ՀԵՂԻՆՔ.— Սակայն ո՞րտեղից գիտէք, որ նա
կամենում է ինձ թողնել:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Նա գնաց իր մօրեղբօր մօտ
դրամ ստանալու և այսօր և եթ հեռանալու այս
բաղացից: (Նւագ):

ՀԵՂԻՆՔ.— (Լոռութիւն: Զղաճութիւն: Ոտի վրայ
է կանգնում) Հաստատ գիտէք այդ:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱ.— Այո՛:

ՀԵՂԻՆՔ.— Մնաց բարով: (Վայրկենական տա-
տանումից յետոյ վճռաբար դուրս է գնում):

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — (Սրագ նւազի Յուզում) : Խեղճ
Ելենա : Ակսենք, ես էլ քո դրութեան մէջն եմ:
Ի՞նչ անեմ: (Մտածում է) Միշան կարող է ինձ օգ-
նել: Նա պարտիզում է: (Մտածում է պատշգամբին) Միխայիլ Մանուկովիչ, Միխայիլ Մանուկովիչ...
լսեց, գալիս է: (Նստում է դաշնամուրի առաջ) ո՞չ,
այսպէս լաւ չէ. պէտք է ցոյց տալ, իբր թէ մեկ-
նում եմ: Գլխա՛րկս... գլխա՛րկս. . (Գնում է ձախ
դանով ու իսկոյն վերադառնում գլխարկը ձեռին, որ
կամենում է գլխին դնել):

ՄԻՇԱՆ. (Մտնում է աշուկիրտական հագուստով):
Մոտենում ու հաճուրում է նրան):

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — Միշա, ամօթ է:

ՄԻՇԱՆ. — Ո՞ւր ես գնում, ես էլ եմ գալու
քեզ հետ:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — Ես առմիշտ գեռանում եմ
այս տնից: Այստեղ ինձ հալածում են:

ՄԻՇԱՆ. — Ես կգամ քեզ հետ:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — Իսկ ինչո՞վ կապրենք:

ՄԻՇԱՆ. — Հօրս ինձ թողած ժառանգութիւնը
միթէ բաւական չէ:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — Դու անչափահաս ես: Քեզ
դրամ չեն տալ:

ՄԻՇԱՆ. — Ես գիտեմ, թէ մօրեղբայլը ո՞ւր է
պահում դրամարկով բանալին:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — Միշա'... (Պառագա):

ՄԻՇԱՆ. — Բայց առանց քեզ չեմ կարող ապրել:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — Եթէ դու ուզում ես իմ այս-

տեղ մնալը, ստիպի՛ր մօրդ ինձ հետ քաղաքա-
վարի լինել:

ՄԻՇԱՆ. — Ի՞նչ անեմ:

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — Պահանջի՛ր նրան, որ ինձ
դէմ ոտնձգութիւններ չանի, սպառնացիր, որ անձ-
նասպան կը լինես, եթէ ես այստեղից գնամ:
Վերջապէս ստիպի՛ր նրան յարգել քո սիրուհուն
քո տան մէջ: Ապա և պահանջի՛ր այնքան դրամ,
որքան այսօր տալու են Արտեմին:

ՄԻՇԱՆ. — Այս բոպէս: Գեղ համար ամէն
րան կանեմ, միայն թէ դու չէռանաս ինձանից:
(Զանգահարում է: Մտնում է սպասաւորը) Մայրիկին
կանչի՛ր: (Պապաւորը գնում է) Մաշա', անգինս,
ես հիմա ցոյց կտամ քեզ, որ գիտեմ իմ սիրած
կնոջ իրաւունքները պաշտպանել:

ԾԱՂԻԿ. — (Մտնում է) Ի՞նչ ես ուզում:

ՄԻՇԱՆ. — Դու ինչո՞ւ ես նեղացնում սրան...
չես իմանում, որ...

ԱԼԵՔՍԱՆՏՐԱՆ. — Լոեցէք, Միխայիլ Մանու-
կովիչ...

ՄԻՇԱՆ. — Սրան սիրում եմ, առանց սրան
չեմ կարող ապրել, չհամարձակւես այլևս սրան
նեղացնել:

ԾԱՂԻԿ. — Սատկես գո՛ւ, որդի, գետինը մըտ-
նես, պատանքդ կարեմ: Օրիո՛րդ, այսօր և եթ կը
հեռանաս այս տնից:

ՄԻՇԱՆ. — Տո՞ւր տասը հազար, ես էլ նրա

հետ կը գնամ:

ԵԱՂԻԿ. — Լոկ'ր, անպիտա՞ն:

ՄԻՇԱ. — Ինչո՞ւ Արտեմին տալիս էք, ինձ չէք տալիս...

ԾԱՂԻԿ. — Երկուսով էլ գետինը մտնէ՞ք:

ՎԱՐԱԳՈՅԹ

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Առաջին դործողութեան տեսարանը, Սեղանները պատի տակ են քաշել և նրանց վըրայ կան զինու և օղու բազմաթիւ շիշեր ու բաժակներ, Վարագոյրը չքացւած լսում են զարմոնի և խառնաճայն երգեցողութեան ձայներ, որ շարունակում են վարագոյրը բացելուց յետոյ էլ, որ ժամանակ զարմոնը նւազում է մի պարեղանակ, Բեմի վրայ կան 8-10 զւարծացողներ, ոմանք ասիտական, ոմանք երապական տարազով):

Ա. ԶԻԱՐՃԱՑՈՂ. — (Իր բարձր ձայնով լոռութիւն է պահանջում, Նւազում են պարեղանակ, Դաշի և Հուրրա աղաղակների մէջ Արրահս մ վեր է կենում, բեմի վրայ կես շրջան անում պարելու ձևով և բոլոր հանդիսականներին զինիով՝ լիքը բաժակներ տալիս):

Արրահամի կենացը: Հուրրա՝ ...

ԲՈԼՈՐԸ. — (Ոտի կանգնելով) Հուրրա՝, Արրահամի կենաց: (Բաժակները իրար են զարնում ու խըճում են):

ԱԲՐԱՀԱՅՄ. — (Լիքը բաժակը ձեռին) Հուրրա՝, (Խճում է: Բաժակները կրկին են լեցնում): Նւազողի կենացը:

ԲՈԼՈՐԸ. — Նւազողի կենացը, հուրրա՝: (ՄԵԿԸ պարում է: Երկրորդը հետեւում է նրան): Դաշի, հուրրա՝:

Ա. ԶԻԱՐՃԱՑՈՂ. — (Զեռները մի քանի անգամ իրար է խփում ուժով): Դաշի, դաշի: Արրահամ, զինին վերջանում է, փող կա՞յ:

Բ. ԶԻԱՐՃԱՑՈՂ. — Պէտք չկայ այլկս, գըլուխնիս կարգին տաքացել է, քիչ պարենք, եղածն էլ խմենք, ապա գնանք ման գալու բաղացից դուրս: Դաշի, դաշի: Լեզգինկա, տղե՛րք, ես ուզում եմ պարել:

ԲՈԼՈՐԸ. — Լեզգինկա, լեզգինկա: Դաշի, դաշի: (Մափ: Պար):

ԱԲՐԱՀԱՅՄ. — (Գինի է ածում, ապա անցնում է դրան կողմը, ուր երեսում է Եւգենիան, որին ոչ ոք չի նկատում) Ժենիա՝: (Համբոյր): Ինչո՞ւ այսքան ուշացար:

ԵԽԳԵՆԻԱ. — Հիւրեր ունէինք: Ինձ ուզում են նշանել:

ԱԲՐԱՀԱՅՄ. — Դու իմ կինը պիտի լինի՞ս:

ԵՒԳԵՆԻԱԼ. — Ճիշտ է. բայց պէտք է շտապել:
Հայրս այլհս ինձ պահել չի ուզում:

ԱԲՐՈՀԱՄ. — Շուտով քոյրս մարդու կեր-
թայ: Ատկից յետոյ էլ մենք կը պատկենք:

Բ. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Օ՛, Ժենիան այստեղ է:
Հուրբա՛: (Մօտենում է ու բարեւում):

ԲՈԼՈՐԸ. — Հուրբա՛: Պար, պար:

Գ. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Ժենիա՛, իմի՞ր այս բա-
ժակը իմ կենացը:

ԲՈԼՈՐԸ. — Ո՛չ, ընկերութեան կենացը:

Գ. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Նախ իմ, ապա ընկե-
րութեան. այսպէս մի հրեշտակի բարեմաղթու-
թիւնը...

ԱԲՐՈՀԱՄ. — (Նրա ճեռից բաժակը Խլելով խը-
փում է յատակին) Զհամարձակւե՛ս...

Գ. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Ինչո՞ւ չհարձակւեմ, աղ-
ջիկ է էլի, այն էլ հայ չէ, որ բաշւեմ:

ԱԲՐՈՀԱՄ. — Անպիտա՞ն, սրիկա՛յ: (Վերցնում
է մի աթոռ) Սրանով գլուխով կը ջարդեմ:

Գ. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Հա՛, հա՛, հա՛... տան
մէջ ինձ է վախեցնում, թէ տղամարդ ես, դուրս
եկ և քեզ ցոյց կտամ բոռնցքիս ուժը:

ԱԲՐՈՀԱՄ. — Համարձակում ե՞ս, դուրս մեր
տնից, դո՞ւրս... (առնում են իրար օձիքից. միւսները
միջամտում են և ջանում են հանգարտեցնել: Երբեմն
լսում է եւգենէի ձայնը, որ Աբրահամ է կանչում: Ծեծ-
կուելով դուրս են զնում: Երկու հոգի հետեւմ են նը-
րանց: Բեմի վրայ թունդ վիճաբանութիւն):

Դ. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Է՛, բաւակա՞ն է, խօսէ՛ք,
սազդ նւազի՛ր... ես կամ ենում եմ պարել... Ժե-
նիա, պարենք:

ԲՈԼՈՐԸ. — Ժենիան է պարում, հուրբա՛:

ԵՒԳԵՆԻԱԼ. — Զեմ ուզում: Զեմ կարող: (Զոր-
րորդ գլարձացողը պարում է. ուժով քաշում է եւգե-
նիային. Մտնում են կարապետ և Սմբատ: Կարապետ
ծափ է տալիս):

Ա. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Բա՛րե, բա՛րե, կարա-
պետ ապեր, ինչպէս ես: Համեցէ՛ք, սեղանին մօ-
տեցէ՛ք: Այս եղբայրը ո՞վ է: Կարապետ ապե՛ր,
զինի չե՞ս ուզում:

Բ. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Գինի մնացել է, որ ուզի:

ԿԱՐԱՊԵՏ. — Մօտենանք սեղանին, Սմբատ:
Սրանք եղբօրդ ընկերներն են:

ԵՒԳԵՆԻԱԼ. — Իսկ ես նրա նշանածը:

ՍՄԲԱՏ. — Շատ ուրախ եմ: Իսկ ուր է եղ-
բայրս:

Ա. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Գնաց կուի:

ՍՄԲԱՏ. — Ինչպիսի ընկերներ էք, որ նրան
մինակ էք թողնում: Գնացէք, ճարեցէք նրան և
բերէք ինձ մօտ:

Բ. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Դու մեզ տնից դուրս ես
անում:

ՍՄԲԱՏ. — Դուք իմ սիրելի հիւրելն էք, մի-
այն ճարեցէք եղբօրս:

Ո. ԶԻԱՐՃԱՅՈՂ. — Կը ճարենք նրան և միա-

սին յետ կզանք: Դու մի քանի դոյլ զինի բերել
առուր:

ԱՄԲՈԾ. — Լաւ, լաւ: (Գնում են):

Եհգենիլ. — Խակ ինձ համար ինչ ես սսում:

ԱՄԲՈԾ. — Զեզ կը պսակեմ:

Եհգենիլ. — Ճնորհակալ եմ: (Համբուրում է
ու գնում):

ԿՈՐԱՊԵՏ. — (Որ ծինչ այդ խճում էր) Այ, լաւ
արի՛ր, որդի, եթէ այդ լակոտներին դուրս չանեիր,
ինձ ոչինչ չպիտի մնար խմելու: Քո կենացը...
թթւած գինի է... կարծես քացախ լինի...

ԱՄԲՈԾ. — Հայր, բաւական է, որքան խը-
մեցի՛ր, գնա՞ միւս սենեակը և պառկի՛ր:

ԿՈՐԱՊԵՏ. — Սպասի՛ր, մի քանի շիշ էլ դա-
տարկեմ... չկարծես լիքն են... ամէնի մէջ հա-
զիւ կէս բաժակ կամ մի բաժակ է մնացել:

ԱԲՐԱՀՈՒՄ. — (Մտնում է առանց զլիարկի, փո-
շոտած, ճակատը ճանկուած, ճաղերը ցրի): Օօ՛, ար-
դերբը ո՞ւր են գնացել:

ԱՄԲՈԾ. — Եկել են քեզ փնտոելու:

ԱԲՐԱՀՈՒՄ. — Այ, ջան տղե՛րը, այդպէս ըն-
կերութիւն կանեն... բայց ծեծեցի հա՞...

ԱՄԲՈԾ. — Աբրահամ...

ԱԲՐԱՀՈՒՄ. — Ամբա՛տ, եղբա՛յրս... (ուզում է
համբուրել):

ԱՄԲՈԾ. — Պէ՛ֆֆ: զինիի հոտ է զալիս բեր-
նից:

ԱԲՐԱՀՈՒՄ. — Գինի եմ խմել, զինիի հոտ
պիտի գայ:

ԱՄԲՈԾ. — Դու կուել ես...

ԱԲՐԱՀՈՒՄ. — Այո՛, նշանածիս պատիւն էի
պաշտպանում:

ԱՄԲՈԾ. — Խակ քոյրդ ո՞ւր է:

ԱԲՐԱՀՈՒՄ. — Ես քոյր չունեմ:

ԱՄԲՈԾ. — Միթէ՞ Հեղինէն քո քոյրը չէ:

ԱԲՐԱՀՈՒՄ. — Նրան հազիւ եմ տեսնում ա-
միսը մի անգամ: Հազնում է որպէս մի իշխա-
նուհի, ման է զալիս հարուստ պարոնների և տի-
կինների հետ և երբ տեսնում է ինձ, պատիւ չի
համարում բարեկել իսկ: Թո՞ղ մեռնի նա: Ես ա-
ւելի գոհ կը լինեմ:

ԱՄԲՈԾ. — Միթէ՞նա քեզ այդքան վշտացըէլ է:

ԱԲՐԱՀՈՒՄ. — Ինչո՞ւ նա չի մնում մեր հա-
մեսս ընտանիքում, ինչո՞ւ է խուսափում նա մեր
շրջանից:

ԱՄԲՈԾ. — Բայց նա ինչպէս մնայ այս ըն-
տանիքում, ուր բացի համեստութիւնից ամէն բան
կայ: Ինչ հաճոյը պիտի ստանայ նա քո ըն-
կերներից, որոնք խմում են խոզի նման ու իրար
հայհոյում որպէս սրիկաներ:

ԱԲՐԱՀՈՒՄ. — Բայց չէ, որ դուք զցեցիք ինձ
այս շրջանի մէջ: Դու համալսարանից դուրս գա-
լուց յետու աներեսլթացար առանց քո գոյութիւնն
իսկ զգացնելու մեզ: Հեղինէն զիմնազիան աւար-

տելուց յետոյ սկսեց խուսափել մեր տնից։ Հայրս
քանի ունէր ինձ զրկեց ուսումնից, գտնելով որ ու-
սումն է ըեզ ու իր աղջկան խլել իր ընտանիքի ծո-
ցից, իսկ երբ սնանկացաւ, այլիս չէր կարող ինձ
դպրոց զրկել, եթէ կամենար իսկ։ Դուք ինձ չէք
սիրել... դո՛ւք ինձ նկատմամբ մէկ մէկ ոճրազործ-
նելներ էք հանդիսացել։

ԱՄԲԱԾ.— Արքահամ, հանդարտ իօսի՛ր։

ԱԲՐԱՀՈՅ.— Հայրս տգէտ էր, դու հեռու
էիր, իսկ բոյրս կրթւած էր ու ինձ մօտ, բայց
երբէք չհստաբրբռւեց ինձանով։

ԱՄԲԱԾ.— Որքան էլ դժգոհ լինես նրանից,
նա մեր քոյլն է, Արքահամ, մենք պէտք է նրան
պաշտպանենք և ազատենք իրան սպառնացող ան-
պատռութիւնից։

ԱԲՐԱՀՈՅ.— Մեր պատիւը Նիազովների տա-
նը մնաց։

ԱՄԲԱԾ.— Դու այդքան սառնութեամբ ես ա-
սում այդ։

ԱԲՐԱՀՈՅ.— Թո՛ղ ճշտւեն իմ կասկածները
ես կապանեմ Նիազովի քրոջ տղան էլ, քրոջս էլ։
Նրանց համար պատրաստ եմ պահում իմ զօտու
ծալքում սուր դաշոյնը։

ԱՄԲԱԾ.— Միթէ դու մարդասպան ես։

ԱԲՐԱՀՈՅ.— Ես անմեղ արիւն չեմ թափիւ։

ԱՄԲԱԾ.— Մի կաթիւ արիւն իսկ թափել
ոճիր է։

ԱԲՐԱՀՈՅ.— Ես սիրում եմ մեր պատիւը, ես
չեմ թոյլ տալ, որ մի սրիկայ արատաւորի իմ
հարազատ քրոջ անունը... ինձ իբրև գողի նըս-
տեցրել են բանտ, այժմ էլ թո՛ղ իբրև մարդա-
պան բանտ գնամ։

ԱՄԲԱԾ.— Գրգուելու կարիք չկայ, եղբայրս,
Հեղինէն ես և դու միացած կարող ենք կարգի
բերել... ոտի ձայն է լւում... ուղղի՛ր հագուս-
տը... (մտնում է Հեղինէ և առանց նկատելու նրանց
գնում է իր սենեակը)։

ԱԲՐԱՀՈՅ.— Գնում եմ ես։

ԱՄԲԱԾ.— Սպասի՛ր, համբուրեցէ՛ք միմեանց,
հաշտեցէ՛ք իրար հետ։

ԱԲՐԱՀՈՅ.— Երբէք. ես նրան չեմ համ-
բուրիլ մինչև այն օրը, երբ նա կամուսնանայ մի
պատւաւոր մարգու հետ և իր վրայից կը վերցնի
անտեղի կասկածները և կամ կը խայտառակի իր
անունը ու կսպանւի այս դաշոյնով։ Դու ես մեծ
եղբայրը, իրատի՛ր նրան։ (Գնում է)։

ԱՄԲԱԾ.— (Մինակ) Միթէ սրանք են իմ հա-
րազատները... հայր, վեր կաց... քնած է...
(Գնում է Հեղինէի սենեակի կողմը և ականջ է գնում)։
Նա ման է զալիս արագ արագ։ (Ուզում է դուռը
բանաւ. Հեղինէ դուրս է զալիս գլխարկը զլխին, ձեռ-
նոցները ձեռին և ձոփ հագուստով։ Ս ճբատ յետ
բաշում)։

ՀԵՂԻՆԷ.— Ինչո՞ւ եկաք այն տեղ։

ԱՄԲԱԾ.— Իսկ դու ինչո՞ւ ես գնում։

ՀԵՂԻՆԵ. — Ե՞ս, ե՞ս... Սակայն այդ ձեր ի՞նչ
քանի է... երէկ ասացի ձեզ, որ դուք իրաւոնք
չունէք իմ գործերին միջամտելու... ես կարող եմ
անել այն, ինչ որ ինձ հաճոյք է պատճառում...
հասկանում է՞ք...

ՄՄԲԱԾ. — Միայն չես կարող անել այն,
ինչ որ պատշաճ չէ, այդպիսի դիպւածում ես ինձ
իրաւոնք կտամ նոյն իսկ բոռունցքի ուժով քեզ
հնազանդեցնելու իմ կամքին:

ՀԵՂԻՆԵ. — Դո՞ւք... մի բօսեակ... մի ինք-
նակոչ խնամակալ... (Թիծաղում է):

ՄՄԲԱԾ. — Այս, ես... քո հարազատ եղբայրը:

ՀԵՂԻՆԵ. — Աչքս լոյս: (Քնծիծաղ):

ՄՄԲԱԾ. — Դու որպէս մի կրթւած աղջիկ,
պարտաւոր ես մեր անոնքը բարձր պահել ամէն
տեսակի խայտառակութիւններից, դու պարտաւոր
ես օգնել քո ծնողներին, որոնք ոչինչ չեն խնայել
քեզ դաստիարակելու համար, դու պարտաւոր ես
նոյն իսկ օգնել քեզ նման բոլոր մարդկանց: Եթէ
դու այդ բոլորը չես անիլ, ես իրաւոնք ունեմ
քեզ ստիպելու, որ անես: Եւ այդ քո երջանկու-
թեան, քո բաղդաւորութեան համար:

ՀԵՂԻՆԵ. — Խնձանից աւելի կրթւած ես դու
ու զարգացած, ինչո՞ւ դու էլ թերացար քո պար-
տականութեանց մէջ և այսօր ներկայանում ես մեր
տանը, որպէս մի աւազակ կամ թափառաշրջիկ:

ՄՄԲԱԾ. — Որբան ուրախ պիտի լինէի, եթէ

դու էլ փոխանակ թրեկու այս ու այն ձրիակերի
հետ, աշխատէիր ինձ նման կատարել քո բոլոր
պարտականութիւնները դէպի այն մարդիկ, որոնց
հաշով ու ջանքերով մենք ապրել ենք ու սովորել:
Համալսարանում դեռ ես ծանօթացայ այն սոսկալի
բռնութիւնների հետ, որ գործ են դնում փոքր թւով
մարդիկ մի խոշոր մեծամասնութեան վրայ: Ես
տեսայ, թէ ինչպէս այդ մեծամասնութեան արեան
քրտինքով կառուցած լուսաւորութեան տաճարների
գոները փակ են նրա զաւակների առաջ, մինչդեռ
փոքրամասնութեան զաւակները օգտում էին նը-
րանց լոյսից ու նրանց աւանդած դաստիարակու-
թիւնից: Իբրև այդ մեծամասնութեան մի զաւակը
որոշեցի պայքարի փոքրամասնութեան դէմ թէ-
կուզ իմ կեանքի գնով, նկիրւցի այն ահեղ մար-
տին, որի մեզ տալիք յաղթութիւնը պիտի բաղդա-
ւորացնի ամբողջ տանջող մարդկութեանը: Մնացի
քաղցած, ծարաւ, թափառաշրջիկ գարձած, բայց
միշտ պայքարողի վեհութիւնը իմ հոգում և պար-
տականութիւնը կատարողի զոհունակութիւնը իմ
կրծքի տակ:

ՀԵՂԻՆԵ. — (Երբեմն լսում է եղբօրը, երբեմն
հայելու ձէջ է նայում առանց նրա վրայ ու շաղրութիւն
զարձնելու, անհաձբեր շարժումներ է անում, ուղղում
գլխարկը կամ շրջազգեստի ծալքերը, Պառը):

ՄՄԲԱԾ. — Իմ պայքարի մէջ ունեցայ յաղ-
թանակի և պարտութեան ըոպէներ: Կերջապէս
ձերբակալւեցի: Աբորուեցի: Եղթայակապ էի մի

քանի տարի շարունակ։ Ոտի տակ էր տըռում իմ
մարդկային արժանապատութիւնը ամենախայտա-
ռակ իսենէշութեամբ։ Ես ոգեորւում էի սակայն
այն խորին հաւատքով, թէ իմ ընկերները շարու-
նակում են իմ կիսատ թողած գործը։ Ես հաւա-
տում էի, որ դու, իմ քոյրը, ձեռք ձեռքի տւած
իմ եղօր հետ կազմում էր տանջլողների բանակի
առաջին վետերանները։ Վերջապէս ես հաւատում
էի, որ յաղթանակը վերջ ի վերջոյ մերը պիտի
լինի.. մեզ պիտի պատկանի։ Եւ երբ մահը աչ-
քիս առաջ ունենալով իմ շղթաները կոտրեցի և
փախայ գէպի այս կողմ, այն երջանիկ յոյսը
ունէի, թէ քեզ, եղօրս ու ծնողներիս պիտի զբա-
նեմ մի ջերմ համերաշխութեան մէջ, որից հեռու
ես այնքան յուզել եւ... բայց ի՞նչ տեսայ այս-
տեղ.. հայրս հարբեցող դարձած.. մայրս լւացա-
քարուէի։ Եղբայրս գողանում է.. իսկ քոյրս..
օօօ.. չեմ հասկանում... ի՞նչ տել... դու քեզ չես
կարողացել բարձր պահել այլ կասկածներից։

Հեղինէ.— Ես արել եմ այն, ի՞նչ որ լաւ եմ
համարել։ (Ծիծաղելով շուռ է տալիս դէճքը նրանից)։
Գուցէ դու էլ կամենայիր, որ ես էլ ընկնէի փո-
ղոցները մի շարք մազը կտրած աղջկանց նման,
յեղափոխական ճառեր խօսէի և բանտ նստէի կամ
Ոիրերիաի գնայի։

ԱՄԲՋ. — Այդ էր քո պարտականութիւնը։
Հեղինէ. — (Շարունակում է ծիծաղիլ) Զէի կա-

բող կարծել, թէ մի համալսարանական այսպիսի
արտառոյ մտքեր կարող է ունենալ.. (շարունա-
կում է ծիծաղիլ)։

ԱՄԲՋ. — Որքան արժէ այդ գլխարկը։ Ո՞վ
է վճարել զրա արժէքը։

Հեղինէ. — Նա որ սիրում է ինձ և այժմ այլևս
խուսափում է ինձանից, որովհետեւ դուք ձեր կոպտու
թեամբ վիրաւորեցիր նրան։

ԱՄԲՋ. — Եւ դու զեռ կրում ես նրա քեզ
ընծայած հագուստը կամ գլխարկը։

Հեղինէ. — Դա սիրոյնշան է, սիրոյ յիշատակ։

ԱՄԲՋ. — Դա ստոր խարերայութեան նշան է,
դա քո պատի գնի մի մասն է։ Դէն զցի՛ք..
դու այդ չպիտի կրես քո գլխին... չես անում...
լաւ... (յափշտակում է գլխարկը նրա գլխից և ոտի տակ
է զցուձ)։ Հերթի հագուստիդ եկաւ։

Հեղինէ. (Յետ է քաշում, ձնում է կանգնած,
**նսում է ուղիլ նրա երեսին, յանկ սրծ ծօտենում ու ապ-
տա՛րմ է ելքորը)։ Ազա կառաղութիւնից լաց է լինում։
Սճառ յիտ է քաշում, բռունցքը բարձրացրած ծօտե-
նում է նրան, յանկարծ կանգնում է ու ծիծաղում։ Ապա
ծօտենում է նրան, նրա թեղ բռնում ու Հեռացնում
աչքերից)։**

ԱՄԲՋ. — Ասա՛, ի՞նչ անուն տալ քո այդ
վարմունքին... չես ասում... ուրեմն ե՞ս ասեմ...

Հեղինէ. — Եերի՛ք, ների՛ք...

ԱՄԲՋ. — Ասա՛, ասա՛...

Հեղինէ. — Կը հանեմ այս հագուստը, նոյն-
իսկ մերկ կը մնամ, միայն ների՛ք ի՞նձ, եղբա՛յր...

ախ, կուրծքս... որքան սեղմում է այս քօրսաւը, որքան ծանր են շրջազգեստիս դրօշակները: (Եպրում է վերարկուն, քանդում է քօրսաժի կօճակները, յանկարձ ջղաձղարար ծիծաղում է, ընկնում է աթոռի վրայ ու լացում): Որքան դժբաղդ եմ... որքան դժբաղդ ես...

ՍՄԲԱԾ.— Հեղինէ...

Հեղինէ.— Ո՞չ մի խօսք, ես կարիք չունեմ քո միմիթարութեան, ես պէտք ունեմ ներողամը-տութեան, լայնասիրտ, մեծաչողի ներողամտու-թեան:

ՍՄԲԱԾ.— Քեզ ներել միայն դու ես կարող, քո՛յը:

Հեղինէ.— Ես մեղաւոր եմ..., բայց ինձ ներել չեմ կարող... մարդիկ շատ վատ են, եղբայր, ոչ ոքին չի կարելի հաւատալ... մինչես ես կարիք ունեի մի մարդու, որին կարողանայի հաւա-տալ ըստ ամենայի:

ՍՄԲԱԾ.— Հանդարտիք Հեղինէ:

Հեղինէ.— Գուցէ կարծում էք, որ ինձ շատ երջանիկ էի զգում այն տանը... ո՞չ..., երբէք... այնտեղ ես միշտ ճնշւել եմ..., և թէև ամէն մի ըոսէ ուզում էի այնտեղից հեռանալ, բայց չէի կա-րողանում..., կար այնտեղ մի բան, որ ինձ քաշում էք և ես գնում էի նրա յետելից... Այնտեղ ճո-խութիւնն էր ինձ զրաւում... (պատզա) ինձ զրա-ւում էր մանաւանդ միշտ անհոգ, միշտ զւարճու-թիւնների յետելից վազող հասարակութիւնը...

Դաշնամուրի ամենաաննշան մի հնչիւնը ինձ զրգե-ռում էր... վայլսի մի շրջան ինձ յուզում էր, իսկ թատրոնների մասին տեղի ունեցող խօսակ-ցութիւնները ինձ լիակատար բաւարարութիւն էին պատճառում:

ՍՄԲԱԾ.— Մի յուզւիք, անոյշ քո՛յը, այժմ քեզ մօտ եմ ես... Ես կաջակցեմ հոգեպէս վերա-նորոգելու համար:

Հեղինէ.— Ներիք, եղբայրս... հաւատա ես մեղաւոր չէի... Այէնսէր, նօրդառ, Շպէլհագէն էի կարգացել, ազատամիտ դարձել, տանը նստել չէի կարող: Ասենք ինչո՞ւ նստէի տանը, ո՞չ կար ա-նել էի իմանում, ո՞չ կերակուր եփել, ո՞չ լացը անել, նոյն իսկ մի երեխայ կարգացնել չէի կա-րող... ինձ ոչինչ չէին սովորեցրել դպրոցում, բացի զարդարելն ու ոռւսերէն կոտրատելը, իսկ իմ շրջապատը ինձ ներշնչել էր միայն մարդու գնալու մասին երազել... ինձ հաւատացնելով, որ շատ գեղեցիկ եմ և իմ գեղեցկութիւնը բաւական է ինձ երջանկացնելու համար: Եւ այդ բոլորի ար-դիւնքը ինձ համար տանջանք, յուզում ու նա-խանձ եղան...

ՍՄԲԱԾ.— Ես ապրել այս քաղաքում չեմ կարող, շուտով պիտի գնամ արտասահման միառ-ժամանակ ոստիկանութեան աչքերից իմ հետքը կորցնելու համար: Քեզ էլ կը տանեմ հետո... այնտեղ քեզ կը սովորեցնեմ աշխատել...

ՀԵՂԻՆՔ. — Այս՝ այս՝ ... (բռնազբօսիկ ժպիտ):
ՍՄԲԱՑ. — Քեզ կը սովորեցնեմ ապրել քո
 շըջանում, օգնել քեզ նմաններին, սովորեցնել նը-
 րանց... և դա կը լինի քո իրջանկութիւնը:

ՀԵՂԻՆՔ (Զղաձգաբար երկար ծիծաղում է):
ՍՄԲԱՑ. — Հեղինէ...

ՀԵՂԻՆՔ. — Դու կարող ես այդ բոլորը ա-
 նել, դու ազնիւ ես... դու կարող ես ազնիւ մարդ-
 կանց երեսին նայել... մինչդեռ ե՞ս... ե՞ս... ար-
 ժանի չեմ յարգանքի... ես պէտք է խարեմ ու
 խարւիմ... զնա՛, զնա՛... (ծիծաղ):

ՍՄԲԱՑ. — Ի՞նչ պատահեց քեզ... Հեղինէ...
ՀԵՂԻՆՔ. — Այս որ... ե՞ս... ե՞ս... անա-
 պակ եւ...

ՍՄԲԱՑ. — Անառա՞կ:
ՀԵՂԻՆՔ. — Աըսս... (ընկնում է ցած ու լացում):
ՍՄԲԱՑ. — Անառա՞կ..., անառա՞կ... ա՛խ նա-
 խազգացումնե՞րս..., նախազգացումնե՞րս... հա՛յր,
 մայր, եկէ՛ք, տեսէ՛ք, ձեր աղջիկը անառակ է...
 ասա՛... քեզ ո՞վ խարեց...

ՀԵՂԻՆՔ. — Ես խաբեցի բոլորին:
ՍՄԲԱՑ. — Ա՛չ...



ԶՈՐՈՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Երրորդ գործողութեան տեսարանը: Դեռ
 բեմի վրայ ինկած զան զեղինէի զիխարկը և
 վերարկուն: Սեղանների վրայ շիշեր ու բա-
 ժակներ: Վարագոյրը բացւելիս բեմը դատարկ
 է: Կարապետ պառկած է նախկին զրութեան
 մէջ: Մտնում է նուշան սեեր հագած, զիխին
 սև շալ: Կոնատակին կայ սպիտակ ճի ծրար:
 Մտնելով բեմ ծրարը դնում է առաջին աթո-
 ռի վրայ):

ՇՈՒԽԱՆ. — Դարձեալ անիծւած Արբահամը
 քէփ է արել ու տունը տանուվրայ թողել: Ո՞չՓ...
 ինչքան յոգնած եմ: (Նստում է): Կոտրւի Հեղի-
 նէի ստը... մի ըսպէ տանը դադար չունի: Վա՛...
 րարով մարդս այստեղ է... (ծօտենում է) Կա-
 րապետ, Կարապետ, (Չարժում է նրան):
ԿԱՐԱՊԵՏ. — Կորի՛ր այստեղից, ի՞նչո՞ւ ես
 բունս խանգարում:

ՇՈՒԽԱՆ. — Վեր կա՛ց, ամօթ է: Հիմա ուր
 որ է, Սմբատը կպայ:

ԿԱՐԱՊԵՏ. — Գնացի՛ր լւացըի փողերն ստա-
 նալու: Տո՞ւր երկու արասի մի շիշ օդի խմեմ:

ՇՈՒԽԱՆ. — Այլևս այս տունը օդի չի մտնիլ:
ԿԱՐԱՊԵՏ. — Դու էլ քո սիրած որդու հետ
 գետինը մտնես: Ի՞նչո՞ւ բունս խանգարեցի՛ր: Ծա-
 րաւ եմ մի քանի կոտէկ տո՞ւր:

ՇՈՒԽԱՆ.— (Յանկանում է զնալ Հեղինեի սենեակը, տեսնում է յատակի վրայ ընկած նրա վերարկուն ու գլխարկը) Այս ի՞նչ է, գլխարկը պատառ պատառ, վերարկուն փոշու մէջ, աղջի՛կս, աղջի՛կս, նրան թակել, չարչարել, սպանել են... (Պազում է նրա սենեակի կողմը):

ԿԱՐԱՊԵՏ.— Հեղինէ... վա՛յ, վա՛յ... նա սպանւած է... (Ճաղերն է փետում ու լացում) բայց... բայց... ո՛չ, ո՞չ, ո՛չ, ո՛չ... (Կուրս է գալիս Հեղինէ մազերը թափւած, աչքերն արտաւակալած) Ծուշան շփոթւած է: Կարապետ նրանց առաջ է վազում): Հեղինէ... դու սպանւած չես, չէ... ո՞վ կարող էր բեզ սպանել:

ՀԵՂԻՆԵ.— (Կրկար հայեցք շուրջը: Զեռը պինդ սեղնում է: Թեթև հեղնական ծիծալ: Գրուիը խոնարհեցնում է ու բարձրացնում) Ես սպանւած եմ...

ԿԱՐԱՊԵՏ (Յետ, է քաշւում):

ՇՈՒԽԱՆ (Գրկում է աղջկան ու լացում):

(Պառւզա: Պատկեր: Մտնում է Ծաղիկ: Հեղինէ ծածկում է երեսն ու արագ հեռանում: Շուշան հետևում է նրան):

ԿԱՐԱՊԵՏ.— Բարո՛վ, Ծաղիկ բաջի՛, բարո՛վ, համեցէք, համեցէք:

ԾԱՂԻԿ — Բա՛րե, ո՞ւր է աղջիկս, Հեղինէս:

ԿԱՐԱՊԵՏ.— Եր սենեակում, համեցէք:

ԾԱՂԻԿ. — Մայրն էլ այստեղ է:

ԿԱՐԱՊԵՏ.— Այո՛, այո՛, Հեղինէի սենեակում, համեցէք: Ես էլ կարող եմ գալ:

ԾԱՂԻԿ.— Ո՞չ:

ԿԱՐԱՊԵՏ.— (Ճենակ) Ի՞նչ են խօսում, ը... հասկացայ: Եկել է աղջկանս իր տղուն կնութեան ուզելու: (Փափիտ) Շուտով հարուստ խնամիներ ու փեսայ կունենամ... (Միծաղ: Մօտենում է դրան ու կրկին լսում) Հեղինէն լաց է լինում... Ծաղիկ բակրին լսում) Հեղինէն լաց է լինում... Ծաղիկ բակրին լսում է... ըլլը... ի՞նչ անում եմ, ոչինչ չեմ կարողանում լսել... (Լուսմ է. յանկարծ յետ է չեմ կարողանում լսել...) Գրուի մատից Սալիկ. երեաշւում: Մտնում է Հեղինէ, նրա յետից Սալիկ. երեաշւում: Կուսն էլ յուզւած: Կարապետ քաշւում է պատի տակ):

ԾԱՂԻԿ.— Հեղինէ, դու ինձ մինչև վերջը

ՀԵՂԻՆԵ.— Ինձ հանգիստ թողէք:

ԾԱՂԻԿ.— Քո ապագան իմ որդու շնորհիւ կործանում է, աղջի՛կս, իսկ ես այդ չեմ կարող տանել... ես նամուս ունեմ... իիդա ունեմ...

ՀԵՂԻՆԵ.— Ինչո՞ւ էք այդ բոլորը ասում:

ԾԱՂԻԿ.— Ես ստիպեցի Արտեմին, որ ամուսնանայ բեզ հետ, նա ինձ բանի տեղ չդրեց, նա այլևս ինձ համար գոյութիւն չունի, եթէ ենա բեխայ ունէք, ասա՛, ո՞ւր է նա... ես նրան կը բերցնեմ, կը որդեգրեմ և կը դաստիարակեմ. հավերցնեմ, բայց իմ անհարազատ թոռը տայ այդ: Ասա՛, հոթո՛ղ իմ անհարազատ թոռը տայ այդ: Ասա՛, հոթո՛ղ իմ անհարազատ թոռը տայ այդ: Ասա՛, գիս, աղջի՛կս, ո՞ւր է երեխան...

ԿԱՐԱՊԵՏ.— Երեխայ, ո՞ւմ երեխայի մասին

է ձեր խօսքը:

ՀԵՂԻՆԵ.— Իմ:

ԿԱՐԱՊԵՏ.— Ես քեզ կսպաննեմ: (Ուզում է խփել):

ՀԵՂԻՆԵ.— Զհամարձակւես... Տիկին, կարող էք հեռանալ, ես ձեզ օգնութեան պէտք չունեմ, նախ երեխայ չունեմ... Երկրորդ, եթէ ունենայի իսկ, աւելի ջուտ կը խեղդեմ, քան թոյլ կտամ, որ նա ապրի ու միշտ ինձ յիշեցնի իմ թշւառութիւնը:

ԾԱՂԻԿ.— Հեղինէ, աղջիկս:

ՀԵՂԻՆԵ.— Կարող էք գնալ, տիկին, և լաւ կը լինի որ մէկ էլ ինձ տեսնելու չգաք:

ԾԱՂԻԿ.— Քեզ միշտ օգնել իմ պարտականութիւնն է: (Գնում է):

ՀԵՂԻՆԵ.— (Գնում է իր սենեակը, քիչ յետոյ կրկին դուրս գալիս: Կարապետ կահկարսւիքն է իրար խփում և «կըսպաննեմ» զորգուում: Հեղինէ ճօտենում է նրան, նայում նրա աչքերին, ապա ճատով ցոյց է տալիս իր սենեակի ծուտցը: Կարապետ լուռ գնում է: Պառզա: Շուշան գալիս է բեմ Հեղինէի սենեակից) Մայրիկ...

ՇՈՒՇԱՆ.— Այդ ի՞նչ փորձանք բերիր քո գլխին, աղջիկս:

ՀԵՂԻՆԵ.— Ների՛ր ինձ, մայր, ների՛ր, դու ինձ այնքան սիրում էիր, մինչդեռ ես քեզ մենակ էի թողնում օրերով ու թրեռում իմ հաճոյը ների համար: Իսկ երբ այժմ ես արտասուում եմ, դու ես միայն ինձ մօտ:

ՇՈՒՇԱՆ.— Եղբայրդ էլ քեզ մօտ է, քեզ

գետ է: Նա և ես միացած կաշխատենք քեզ երշանիկ դարձնել:

ՀԵՂԻՆԵ.— Այդ մասին չեմ էլ մտածում, ինձ միայն մի բան է հարկաւոր, քո և եղբօրս ներողամտութիւնը և այն էլ, ո՛չ միայն ինձ, այլև այն մարդու նկատմամբ, որից խարւեցի ես:

ՇՈՒՇԱՆ.— Նրան կը ներեմ միայն այն դէպքում, երբ նա կը պսակւի քեզ հետ:

ՀԵՂԻՆԵ.— (Հազիւ լսելի ձայնով) Նա կը պըսակւի:

ՇՈՒՇԱՆ.— Ո՞ւր է, ի՞նչո՞ւ չի գալիս քեզ միսիթարելու:

ՀԵՂԻՆԵ.— Նա կգայ, մայր, անպատճառ կգայ, նա ինձ սիրում է, չի կարող ինձ խարել, միայն ասա՝ Սմբատին որ ների նրան, նրանից միայն ասա՝ (Համբաւին է): (Լալիս է): Վրէժ լուծելու փորձ չանի. նա վախկու է: (Լալիս է):

(Թակում են ծուտքի դուռը: Հեղինէն կամեան է փախչել: Շուշան դուռը բաց է անում: Մտնում է Արտեմ: Հեղինէ դիմում է դէպի նա):

ՀԵՂԻՆԵ.— Ես խարւած չէի, Արտեմ, չէ, ես քեզ էի սպասում և ահա դու արդէն այստեղ ես:

ԱՐՏԵՄ.— Եկայ ձեզ մի քանի կարեոր բաշեր ասելու, օրիո՞րդ, միայն առանց վկանեթի ներկայութեան:

ՀԵՂԻՆԵ.— Մայրիկ, մեզ առանձին թո՞ղ: (Շուշան գնում է) Այլուս մենակ ենք, (Ուզում է բըռնել նրա ձեռը):

ԱՐՑԵՄ.— (Յետ է մղում նրան) Ոգևորւելու
կարիք չկայ:

ՀԵՂԻՆԵ.— (Յետ է քաշւում զլուխը կախ) Ար-
տեմ...

ԱՐՑԵՄ.— Լոի՛ր: (Պառւզա) Եղբայրդ քիչ ա-
ռաջ եղել էր մեզ մօտ և սպառնազին պահանջել
էր ինձ տեսնել: Նրան հաւատացրել էին, թէ ես
հանքերում եմ գտնւում:

ՀԵՂԻՆԵ.— Յետո՞յ:

ԱՐՑԵՄ.— Ես վախենում եմ նրանից, դրա
համար էլ որոշեցի հեռանալ քաղաքից և չվերա-
դառնալ քանի որ նա այստեղ է:

ՀԵՂԻՆԵ.— Խակ ես ի՞նչ կանեմ քո քացա-
կայութեան ժամանակ:

ԱՐՑԵՄ.— Եկայ առաջարկելու, որ դու էլ ինձ
հետ գաս...

ՀԵՂԻՆԵ.— Ի հարկէ պսակւելուց յետոյ:

ԱՐՑԵՄ.— Պսակւելու մասին չեմ մտածում
իսկ: Մենք կապրինը իրար հետ, քանի իրար սի-
րում ենք... իսկ երբ այլես իրար չենք սիրել,
ես քեզ կապահովացնեմ նիւթապէս... որից յե-
տոյ շատերը կը ցանկանան քեզ հետ ամուսնանալ...

ՀԵՂԻՆԵ.— Խնդրում եմ... դո՛ւրս... չյ մն-
դգնես ուրիշ անգամ ոտք դնել այստեղ... Ես չեմ
կամենում այլես ձեր սէրը և ձեր դրամը... մին-
չեւ այժմ բաւական ստորացայ ձեր առաջ... իսկ
այժմ այլես չեմ կամենում... դո՛ւրս,

որիկա՛յ... դո՛ւրս...

ԱՐՑԵՄ.— Բայց և այնպէս նախ քան ձեզա-
նից բաժանւելու, ես մի պարտականութիւն ունեմ
կատարելու... ես կամենում եմ ձեզ ապահովել...
(Հեղինէ ամբողջ ժամանակ նայում է նրա երեսին, յան-
կարծ մօտենում է նրան ու ցանկանում է ապահովել,
բայց իրան պահում է. ապա նրա. թւեից բոնած դուրս
է անում):

ՀԵՂԻՆԵ.— Կորա՛ւ ամէն բան, կորա՛ւ...
(Ընկնում է աթոռի վրայ ու հեկեկում բարձր ձայնով)
մայրի՛կ... (Ծուշան մտնում է և գրկում նրան. նրան
հետեւում է կարապետ):

ԿԱՐԱԳԵՑ.— Ինչո՞ւ էր լալիս, Շուշա՞ն:
ՇՈՒՇԱՆ.— Լոի՛ր և հեռացի՛ր այստեղից:
ԿԱՐԱԳԵՑ.— Շուշա՞ն, այդ ինչե՞ր ես ա-
սում... էկէր ջէննէթդէ մէնզիլիմ օլսա, օրայս
ուռմ... սէվիլիյիմ սէնսիզ... (Մտնում են Սլմ-
գիթմանամ, սէվտիլիյիմ սէնսիզ... Աբրահամ: Վերջինը զայրացած իր յետեից քաշ
բատ և Աբրահամ: Վերջինը զայրացած իր յետեից քաշ
է տալիս Աբրահամին), վա՛յ, Արտեմիյ Մանուկովի՛չ...
բարո՞վ, բարո՞վ...

ՀԵՂԻՆԵ.— Ահ... (զլուխը թագցնում է մօր
կրծքի վրայ):

ԱԲՐԱՀԱՄ.— (Աբրահամին առաջ հրելով մօտենում
է նրան հեռացնում է մօր կրծքից, երեսը՝ դարձ-
քրոջը, նրան հեռացնում է մօր կրծքից): Ասա՛, սա՞ է քեզ խարողը:
նում է Աբրահամի կողմէ):

ՀԵՂԻՆԵ.— Այո՛, (Աբրահամ մերկացնում է
փոքրիկ դաշոյնը և յարձակում է Աբրահամի վրայ: Հեղինէ
ինքնիրան գցում է նրանց մէջտեղ: Սմբատ բոնում է
Աբրահամի ձեռքը, Շուշան էլ օգնում է Սմբատին:

Աբրահամ դիմադրում է, ուզում է խփել:

ԱԲՐԱՀԱՄ.— Ես նրան շան սատակ եմ ա-
նելու:

ՀԵՂԻՆԵ.— (Արտէմին) Հեռացի՛ր, փախի՛ր...
(Արտեմ ՀՀկած է) փախի՛ր... (Շարժում է մի քանի
անգամ, յետոյ ճօտեցնում է մուտքի դրանը Արտեմ
փախչում է):

ԱԲՐԱՀԱՄ.— Ես նրան անպայման կըսպան-
նեմ, իզուր էք պահում ինձ...

ՀԵՂԻՆԵ.— (Շուշանին ու Թմբատին հեռացնում
է Աբրահամից և կուրծքը ցոյց տալիս) Եթէ կամենում
ես անպայման արիւնով մաքրել իմ կրած անպատ-
ւութիւնը, սպանի՛ր ինձ... (Աբրահամ ցած է զցում
դաշոյնը) Յաճախ եմ մտածել անձնասպան լինել...
բայց չեմ կարողացել... այժմ էլ ցանկանում եմ
մեռնիլ... Խրի՛ր, եղբա՛յր, այդ դաշոյնը կուրծքս
և յափտեան կազատեմ իմ տանջանքներից... նա
ինձ շատ է վիրաւորել, այո՛, բայց միշտ նոյն
վէրքելը փաթաթել է մետաքսով... դու վիրաւո-
րի՛ր այնպէս, որ առմիշտ կտրփի շունչս և ես
մեռնիմ... (Գետնից վերցնում է դաշոյնը ու տալիս
նրան) Առ և զար'կ...

ԱԲՐԱՀԱՄ (Թոյլ բռնում է դաշոյնը):

ՇՈՒՇՈՆ (Ծոնում է դաշոյնը նրա ձեռից):

ԿՈՐԱՊԵՏ (Աջ ու ձախ է գնում առանց հասկա-
նալու թե ի՞նչ է անում)

ՍՄԲԱԾ (Զեռները խաչածե կանգնած է):

ՀԵՂԻՆԵ (Դողում է):

ԱԲՐԱՀԱՄ (Նայում է բրոջ երեսը երկար Ապա
թաշկինակը ճօտեցնում է աչքերին):

ՀԵՂԻՆԵ.— Ուզում եմ լացել, բայց չեմ կա-
րողանում... թակեցէք ինձ... փշեցէք... ցա-
ւացրէք...

(Թուսահատ շարժումներ)

ՍՄԲԱԾ.— Հեղինէ՛, հանդարտ... (Պառզա)
Արի՝ ինձ հետ... զնա՛նք... հեռանանք այստեղից...
Առ մի ծառ, ամէն մի քար, ամէն մի տուն
ուր ամէն մի ծառ, ամէն մի քար, ամէն մի տուն
կամ մարդ քեզ պիտի յիշեցնի քո անպատու-
թիւնը... մինչդեռ այստեղից հեռու, դու շուտով
կը մոռանաս քո անցեալը...
ՇՈՒՇՈՆ.— Սմբատ... ո՞վ ես զնում... ո՞վ

ես տանում իմ աղջկան... ի՞նչ կանեմ ես մե-
նակ... թշւա՛ռ...

ՀԵՂԻՆԵ.— Չեմ գնալ նրա հետ, մայր... դու
հանգիստ մնայ... ես պէտք է մնամ այստեղ... ա-
մէն րոպէ պիտի զգամ իմ կրած զրկանքներն ու
անպատութիւնը... ամէն վայրկեան պիտի սոռ-
անպատութիւնը... և այդ մշտատե տանջանքի մէջ պիտի
բանամ... և այդ մշտատե տանջանքի մէջ պիտի
բանամ մոռանալ իմ անցեալը... եղբա՛յր... վըս-
ջանամ մոռանալ իմ անցեալը... տանջանքի մէջ կաշխատեմ ես...
տահ եղի՛ր, որ սրանից յետոյ կաշխատեմ ես...
կաշխատեմ այնպէս և այն ուղղութեամբ, ինչպէս
զէ այնպէս կաշխատեմ այնպէս... չէ որ մենք հարազատներ
դու ես աշխատել... չէ որ մենք հարազատներ
ենք... ես պիտի ջանամ իմ անունը մաքրել և ինձ
ենք... ես պիտի ջանամ իմ անունը մաքրուր, մեծ ու
քո բոյը դարձնել... նոյնքան մաքրուր, մեծ ու
անձնւէր... եղբա՛յր... ների՛ր ինձ և հաւատա՛,

= 60 =

"Ե կը լինեմ քեզ նման . . .

ՍՄԲԱՏ. — Անգին բոյրս, չեղինէս . . . (Գրկում
է նրան, Դրան թակոցի ձախն Աբրահամը գնում է դեպի
դուռը, բացում է, դուրս է նայում և յետ դառնում):


ԱԲՐԱՀՈՅ. — Ոստիկաններ և ժանտարմներ
գալիս են մեր կողմը:

ՍՄԲԱՏ. — Մնաք բարով: (Յանկարծ բաժան-
ում է բրոջից ու դուրս գնում):

ՎԱՐԴԴՈՅԹ

ՎԵՐՋ





ՀՀ Ազգային գրադարան



NL0363393

36.443

204

առի

9M

առի

ԳԻՆ 20 ՄԵՆԹ
